Տանկասանի, Ռուսասանի, Բրուսիոյ, Սափսոնիայի, Պափերայի, Չուիցերի եւ Իսպիոյ մէջ տեղն է, որ ունի 52,000,000 բնակիչ եւ մայրաքաղաքն է Վիեննա ուր 500,000ի չափ բնակիչ կայ: Աւստրիոյ տէրութիւնը չորս մեծամեծ (Գերմանացի Հոնկարացի, Լեհացի եւ Իսպացի) ժողովուրդէ բաղկացեալ է. բուն աւստրիացի բնակիչք են 2,009,000 եւ այս մասը հիմնապէս զուտանէրէ մէկն էր որ Տիբերիոս կայսեր ասէն տիրէին (33 ին). իսկ նիւգերորդ դարէն մինչ ի մեծն Կարոլոս ոսնակոյն եղաւ այլեւայլ ազգաց: Կարոլոս տիրէր Գերմանիոյ 794 էն մինչ ի 928: Աւստրիա դիւրութիւն եղաւ 1136 ին եւ կայսրութիւն 1146 ին որ Հաւզպուրկի սերունդը զօրանալով բոլոր Գերմանիոյ տիրէր ու կայսրութիւն անուանեցաւ մինչ ի 1806, որ այն պատուանունը փոխաբերով միայն Աւստրիոյ կայսրութիւն կոչեցաւ, եւ վերջի տարիներս Լոմպարտիա ձեռնէն եղաւ: Աւստրիա հզօր տէրութեանց վարդն է եւ 600,000 զօր ունի. զիստրիանք եւ արհեստք մանաւանդ վաճառականութիւնը ծաղկած են այս երկրի մէջ, կլիման բարեխառն է եւ բնակիչքը հանդարտ ու ծանր բնութիւն ունին:



ՄԻԱՊԵՏԱԿԱՆ

ՏԵՐՈՒԹԻՆՆ



ԿԲՕՆՔ

ՄԱՀՄԷՏԱԿԱՆ

## Տ Ա Ղ Կ Ա Ս Տ Ա Ն

Պարսկաստանի, Ափրիկէի, Յունաստանի, Ադրիական ծովին, Աւստրիոյ եւ Ռուսաստանի մէջ տեղն է. այսինքն, Ասիոյ, Ափրիկէի ու Եւրոպայի տիրած է մասամբ իւրիք, եւ ունի 22,000,000 բնակիչ, զանազան ազգերէ բաղկացեալ, որոց 9,500,000 միայն Տանիկ է: Այս երկրին հպասակ ազգաց մէջ երեւիք են Հայք, որոց թիւն է 3,550,000 էն աւելի որ եւ ամենէն այժխոյժ ու արամիս ժողովրդն համարւած են. Մայրաքաղաքն է Կոստանդնուպօլիս ուր կայ 4,000,000ի չափ բնակիչ: Այս ազգը բուն թիւրքիստանցի է, որ սասներոդ դարուն սկսաւ արշաւել Կասպիյ ծովուն արեւելեան կողմէն՝ դէպ ի Պարսկաստան եւ յետոյ փոքր Ասիա: Իրենց պէտն Յունաստան եղաւ ի Բարսանիսար. Սուլթան Օրհան բոլոր փոքր Ասիոյ տիրեց. եւ 1555ին Եւրոպա անցաւ. Մոհամմէտ Բ. առաւ Կոստանդնուպօլիսն յունացմէ 1455ին, ու մինչեւ Իսպիոյ սահմանաց մտնեցաւ. իսկ 1571էն (Կորնոթի պատերազմէն) ի վեր տէրութիւնն սկսաւ փոքրանալ: Այս ազգը զիստրեան, եւ արհեստի կողմանէ աղետալի վիճակի մէջ է. հիրառէր է եւ բարեսիրտ՝ բայց բնասմենայնի խաւարեալ:



ՂՈՒՊՅՆՂՈՆՈՆ

ՏԻՐՈՒԹԻՒՆ




ԿՐՕՆԻ

ՀՈՍՄԻԱԿԱՆ

## ՍԱՐՏԵՆԻԱ

Վէնէտիկի եւ Հռովմայի վիճակներուն, ձկնովայի ծոցին, Ֆռանսայի ու Չուիցերի մէջ է. Միջերկրական ծովոյն մէջ ալ Սարտենիա անուն մեծ կղզին ունի. բնակչաց թիւն է 8,500,000. մայրաքաղաքն է Թուրին ուր 200,000 բնակիչ կայ: Փիէմոնթի իշխանութիւնը (որ այս անուն էւս ունի) եւ Սալոյայ կոմսութիւնը 1416ին միացան. 1552էն մինչ ի 1559 Ֆռանսայի սերութեան սակ մնացին. 1720էն ի վեր դքսութիւնը թագաւորութեան փոխեցաւ ու մինչեւ ցայժմ ծաղկելով վերջերս ալ Լօմպարտիայի տիրեց: Իսպիոյ այս մասը թէ գիտութեամբ եւ թէ արհեստի միւս մասերէն շատ առաջ է. Տերութիւնն ունի 120,000 զօրք ի պատրաստի. համալսարանից եւ վարժարանից թիւը շատ է. ուստի եւ խիստ առաջ գացած ու հզօր տերութեանց կարգն անցած է այժմ: Գիտութիւնն ու արհեստը՝ մանաւանդ երկրագործութիւնը՝ առաւել է հոս, քան Իսպիոյ այլ մասերուն մէջ, վաճառականութեամբն ալ միւսներէ յետ չմնար՝ թէ ծովային եւ թէ ցամաքային հաղորդակցութեամբ. ելած մեծախնայ մեծապատուական է եւ ամէն տեսակ պտղեղենն առաս են այս երկրի մէջ:





ՉՈՒՆՆԱԿԱԿԱՆ

ՏԻՐՈՒԹԻՆ



ԿՐՕՆԻ

ՀՈՈՄԷԱԿԱՆ

## ՍՊԱՆԻԱ

Արեւմտեան Եւրոպայի ծայրը՝ ձիաբարձայի, Ասթանեան ուկրաինոսի, Փորթուկալի եւ Ֆուանսայի մէջն է. իսկ Ամերիգայի մէջ ալ շատ տեղեր ունի. բուն Սպանիոյ մէջ 13,500,000 բնակիչ կայ եւ այլ գաղթականութեանց մէջ 3,700,000. որ ունի 48 գաւառ. մայրաքաղաքն է Մասրիս, ուր 200,000, բնակիչ կայ: Իսկզբանէ Փիւնիկեցիք սկսան բնակիլ այս երկրին մէջ, յետոյ Յոյնք եւ Կարթագինեցիք. իսկ 225, նախ քան զԲրիտանոս, Հռովմայեցիք տիրեցին մինչ ի 440, եւ յետոյ Գալլիացիք եւ այլք: Արապներն եկան 711ին եւ տիրեցին *Գալիֆա* անուամբ՝ մինչ ի 1031: Սպանիան Ամերիգայի մէջ ընդարձակ տեղեր ունէր, բայց 1817ին շատերը ձեռքէն կտան: Այս երկրին երկրագործական վիճակն աղետալի է, բայց ամէն բանի համար գրեթէ կայ՝ մանաւանդ սննդիկի եւ մարմարիօցի. հին աստեղ ոսկի եւ արծաթ ալ շատ կար, բայց այժմ սպառած են: Սպանիացիք Հնդկաստանի մէջ ալ տեղ ունին որ շատնոց ի վեր պահած են: Արիւստք եւ զիսոս քիւնք այնչափ առաջ գացած չեն, վաճառականութիւնն ալ խիստ շարժուն չէ, բնաւորութեամբ անոյց են եւ չափազանց կրօնասէր:



ՅՈՒԿՆԵՆՉՆՈՅՈՒՆ

ՏԵՐՈՒԹԻՆ



ԿՐՈՒԹ

ՀՌՈՄԷԱԿԱՆ

## Փ Օ Ր Թ Ո Կ Ա Ն

Սպանիոյ արեւմտեան կողմը՝ Եւրոպայի ծայրն է, որոյ բոլոր եզերքն Ասլանսեան ովկիանոսին վրայ հայի . եւ ունի 3,500,000 բնակիչ . մայրաքաղաքն է Լիզպոն, ուր եւ 260,000 բնակիչ կայ . այս երկիրը երկրաւարձութեան ենթակայ է միտս . Լիզպոն քաղաքն երկրաւարձութեամբ աւերած է 1531ին, եւ բոլորովին կործանած 1755ին : Փորթուգալի 195ին, յառաջ քան զՔրիստոս, սկսան պատերազմիլ հռոմայեցոց դէմ եւ վերջապէս հպատակեցան 570 արւոյ չափ, եւ յետոյ Արապներուն՝ որ կեցան մինչ ի 1095 : Փորթուգալի զօրացան եւ առաջին եղան Հնդկաստանի նաւբաները բացօղ , ու 1498ին շատ տեղերու՝ եւ քանի մի արիւն յետոյ Ամերիկայի մէջ՝ բոլոր Պրեզիլիայի տրեցին . իսկ 1580էն մինչ ի 1640ին Սպանիոյ իսկ մնացին եւ այնուհետեւ անկախ : 1807ին քաղաւորը Պրեզիլիայ փախաւ, մեծն Նափօլէօնի արշաւանէն, եւ 1821ին դարձաւ . բայց իր զօրն Պրեզիլիայի կայսր անուանեցաւ 1822ին ու տեղաբնակներէն երկուրի բաժնեց . Փորթուգալի կրթեալ են՝ մանաւանդ ցարկութեան մէջ, բնաւորութիւնին անոյժ, վարուց մէջ ալ Հայոց յար եւ նման են :



ՊՈԿՈՂՆԱԳՐԱԿԱՆ

ՏԻՎԻԹԻՆ




ԿՐՈՆԻ

ՀՈՍՏԻՆԱԿԱՆ

## Պ Ե Լ Ճ Ի Ք Ա

Ֆրանսայի, Բրուսիոյ, Հօլանսայի մէջ՝ եւ Անկլիայն Եւրոպայէն զատօյնեղուցին եզերեն է՝ 9 գաւառի բնակչութիւնն եւ 4,250,000 բնակիչ ունի: Այս երկիրը սափակ է եւ խիստ բարեբեր. մայրաքաղաքն է Պարիսէլը որ ունի 100,000 բնակիչ: Եւրոպայի մէջ այս ժողովուրդը կայ միայն՝ որ Հռոմայի արեւմտեանը՝ մանաւանդ Կեսարի սարապիւլի գօրութեանը դէմ կեցած է երկայն ատեն եւ ամենայն սասկերտեամբ: Հին Պելիսիան որ Հօլանսայի հետ միացած ու ընդարձակ էր՝ երկայն ատեն՝ Սպանիոյ եւ Աւստրիոյ Տերութեանց՝ ու վերջապէս 1801 ին բոլորովին Ֆրանսայի սակ ընկաւ՝ մինչ ի 1814: Պելիսիացիք 1830 ին չարաչար զարնրվեցան Հօլանսացոց դէմ, ու 1831 ին Լէօփօլց (Սաֆա - Պուրկի իսլամը) բազաւոր կարգեցաւ իրենց, որ եւ կայ մինչեւ ցայժմ: Գիտութիւնք, արհեստք՝ մանաւանդ վաճառականութիւնը՝ այնչափ առաջ գացած են այս երկիրն մէջ որ Ֆրանսայիցն ու Անկլիայիցն ալ առաւել շարժուն կրնայ համարիլ: Անճամար հանք, եւ ամէն բանի մեծամեծ գործարանք ունի. ժողովուրդը շատ աշխատասէր է՝ կառավարութիւնն ալ խիստ ազատասէր:



ՉՈՒՆՆԱԿԱՆ

ՏԻՐՈՒԿ



ԿՐՕՆԻ

ԲՈՂՈՔԱԿԱՆ

### ՍԱՔՍՕՆԻԱ

Աւստրիոյ, Պաւիերայի եւ Բեռլինոյ մէջ տեղն է, եւ ունի 5 գաւառ ու 1,700,000 բնակիչ. մայրաքաղաքն է Տրեսն, ուր 72,000 բնակիչ կայ: Այս ազգը որ երկայն ասէն կուսպաւս եւ անկիրք մնաց, Գ. դարուն ասեցնէր Պապիկ ծովին եզերացը մեծ մասին տրեց, եւ իր հէնուրեամբ՝ թէ Եւրոպայի հիւսիսային եզերաց եւ թէ Բրիտանիոյ կողմերուն՝ մեծամեծ վնաս տուաւ: Այս երկիրը 1422էն ի վեր դիտուիլն էր (որ այժմեայ քաղաւորութեան հիմն է), յորմէ ասեցով 4 իշխան եղան Բրիտանիոյ վրայ արշաւեցին ու բնակչաց հետ 449ին միանալով՝ 4 իշխանութիւն կազմեցին: Երբոր մեծն Կարոլոս բոլոր Գերմանիոյ տրեց, բնակիչք երկրիս ստիպեցան ու 783ին Բրիտանեութիւնն ընդունեցին: Մեծն Նափոլէօն 1806ին դիտութիւնը քաղաւորութեան փոխեց, որ այժմ 15,000 զօրք ունի: Այս երկրին հանր խիստ շատ է եւ ժողովուրդն արհեստներու մէջ յաջող՝ վաճառականութեամբ ալ հաւասար է իրեն դրացի ժողովրդոց: Սափաօնիայի մէջ է այն Լէյսլիկ քաղաքն որ 53,000 բնակիչ ունի եւ համաբաւար է իւր մեծ տնտեսականութեան որ տարին երեք անգամ լինին:



ՆՈԿՈՒՆԳՈՂՈՇՈՈ

ՏԵՐՈՒԹԻՆ



ԿԳՈՒԲ

ԲՈՂՈՔԱԿԱՆ

## ՀՕԼԱՆՏԱ

Հիստորիան ծովի եզերին ու Պելնիխայի եւ Հանովրի մէջ տեղն է, որ ունի 11 գաւառ եւ 2,604,000 բնակիչ. մայրաքաղաքն է Ամստերսամ, ուր 20,000 բնակիչ կայ, քաղաւորն ի Հայիա բնակի որ 53,000 բնակիչով փոքր քաղաք մի է : Հօլանտայի Տերութիւնը Ափրիկէի ծովեզերաց վրայ երկիրներ ու Ամերիգայի մէջ ալ կողմերն ունի. նոյնպէս եւ Հնդկաց ծովէն անդին Սումատրա եւ շաւա կողմերն, եւ ասոնց ամենուն մէջ 9,300,000 բնակիչ կայ : Այս երկիրը ծովէն ցած է եւ իր սեռնաշէն պատերովը միայն ազատ է Ովկիանու ջրոց ընթացէն : Հօլանտա երկայն ասէն անբնակ էր : Բնակութենէ վերջը Կեսարի դէմ խստութեամբ պատերազմեցան . մեծն Կարոլոս տիրեց ուր քրիստոնէութիւնը մտցուց 756ին : Վերջապէս 1477ին, Սպանիացոց սակր ծաղկեցաւ ու Հնդկաստանի նամբան բացաւ . 1579ին ինքնիշխան մնաց մինչ ի 1806, ուր Նապոլէոնի եղբայրը քաղաւորեց, ու 1814ին Պելնիխայի հետ միացաւ, բայց 1831ին առանձնացաւ . Հօլանտացիք բամբասոված են իբրեւ վերամիտ բայց քէ արհեստի եւ քէ վաճառականութեամբ շնտ ազգերէ իրօք չեն տարբերի :



ՅՈՒՆՅԱՆՆՈՂՈՇՈՂ

ՉՎԻՓՎՍԿԻՏ



ԿՐՕՆԲ

ԲՈՂՈՔԱԿԱՆ

## Տ Ա Ն Ը Մ Ա Ր Ք

Միայն Հանովրի կողմանէ ցամաքի կպած ու մնորցորդը թեակզզոյ նման ծովապատ երկիր մի է, եւ ունի արեւմտեան կողմէն՝ հիւսիսային ծովն, ու հիւսիսէն՝ Սֆանհէր-Պաքի նեղուցն. իսկ արեւելէն Քաթէկաքի նեղուցն ու Պաքիի ծովն, ուր որ Ջէլանս կղզոյն հետ շատ ալ մանր կղզիք ունի: Այս երկիրն որ 2,000,000 բնակիչ ունի, խիստ սափակ ու խոնաւ է, եւ լներով լի. մայրաքաղաքն է Քօփէնակ, որ եւ ունի 125,000 բնակիչ: Տանըմարաքիք (Ջէլանսի մէջ) հնուց ի վեր ծովոյ հէն էին եւ իրենց մօտ երկիրները՝ մանաւանդ Անկլիան իրենցմէ նեղութիւն կրեցին: Քրիստոնէութիւնը 826ին այս երկրի մէջ մտնելէն յետոյ՝ կառավարութիւնը այնչափ զօրացաւ որ երկու անգամ արեւաեցին Անկլիայի վրայ. նախ 878ին երկրորդ 1016. ու մինչեւ 1047ին տիրեցին. իսկ յետոյ այլեւայլ կառավարութեանց հպատակելէն յետոյ 1448ին՝ Քրիստիան առաջինը թագաւոր եղաւ: Տանըմարաքի մէջ արհեստն ու վաճառականութիւնը բաւական առաջ գացած է, կրթութիւնը մանաւանդ այն աստիճանի հասած է որ մտքը չկայ գրել եւ կարդալ չգիտցող: Այս ազգը ծովի վրայ ալ յաջողակ է:



Չ Ո Կ Ո Տ Գ Ե Ն Վ Ա

Տ Ե Ր Ո Ւ Փ Ի Կ



Կ Ր Օ Յ Բ

Բ Ո Ղ Ո Ւ Ք Ա Կ Ա Ն


## Շ Ո Ւ Է Տ

Հիւսիսային Ռուսիոյ՝ Լաիօնիա նահանգին ու Ֆիլանսիայի արեւմտեան կողմի՝ Պօքնի ծոցին, Պալիկ ծովուն եւ Նորվեհիայի մէջ տեղն է. որ ունի 24 գաւառ եւ 2,825,000 բնակիչ. Մայրաքաղաքն է Սթոկհոլմ, ուր 90,000 բնակիչ կայ: Այս երկրի կառաւարութիւնն ի սկզբանէ անհաստատ վիճակի մէջ էր. Թ. դարուն երբ որ քրիստոնէութիւնը ժողովուրդը ու անկլիսացոց միջնորդութեամբն այս երկիրը մտաւ՝ անձանօք տեղերէ Բանի մի անձինք սկսան քաղաւորել մինչ ի 1589. յետոյ Տանրմարիայի հետ միանալով՝ ուղակի նոյն տէրութեան տակն անցաւ. իսկ 1523 ին ապստամբեցան բնակիչք եւ հալածելով զՏանրմարիայիս՝ անկախ եղան ու զօրացեալ մնացին մինչ ի 1720. Եւ անս այս միջոցին էր որ Շուէտացիք համբառ առին Եւրոպայի մէջ, իսկ 1721 ին Ռուսերէն յաղթրվելով շատ տեղեր կորուսին: Այժմ 53,000 զօր ունի եւ բնակիչք չորս կարգի բաժանին, ազնիւ, հոգեւոր, քաղաքացի եւ գեղացի. կլիման ցուրտ եւ անբերրի է. կապարի, պղնձի հանք շատ ունի ու երկաթը ստեղծելու բնիւն է: Այս երկրին մէջ արհեստն ու վաճառականութիւնը բաւական ծաղկած է:



ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ

ՏԵՐՈՒԹԻՒՆ



ԿՐԾԻՖ

ՀՈՍՏԻԱԿԱՆ

## Ն Ա Փ Ո Ւ Ի

Արեւելեան կողմէն Ադրիական ծովին, հարաւէն ու արեւմուտէն Միջերկրականին ու հիւսիսէն Հռոմայի սահմանաց մէջ տեղն է, իբրէ քերակողի դէպ ի Միջերկրական երկնցած՝ որ իր արեւմտեան կողմը *phiuro* ըսված նեղուցէն անդին Սիչիլիա անուն կղզին ալ ունի, որ Միջերկրականին ամենամեծ կղզիներէ մինն է, եւ այս երկու մասը միասեղ՝ *սագաւորութիւն երկու Սիչիլիոյ* կոչի: Նափօլի տերութիւնը 22 գաւառի բաժանի, եւ ունի 8,000,000 բնակիչ: Օղը լաւ է, բայց խիստ սաք եւ երկրաւարժութեան ենթակայ. մայրաքաղաքն է Նափօլի, ուր եւ 380,000 բնակիչ կայ: Հռչակաւոր Վեառով անուն հրաբուխը Նափօլի քաղաքին դիմացն է, որ երբեմն զարնուելի տեսանի ծծմբախառն բոցով: Այս երկին ու Սիչիլիայի պատմական վիճակը յար եւ նման են. որ երբեմն յունաց, Հռոմայի, յետոյ Գերմանիայի, Լոմպարժոյ, եւ վերջապէս Յռանսայի տակ ինկաւ. 1812ին Յերսիանոս Գ. տիրեց երկու մասին որ մինչեւ զայժմ միացեալ կան: Երկիրը բարեբեր է, բայց բնակիչքը բանդաղ. գիտութեամբ ծոյլ են, իսկ վաճառքով ու արհեստի փոքր ինչ տարծուն:







ՉՈՒՆՏԳՆՈՂՆՈՂ

ՉՎԻՓԻՓԻՑ



ԿՐՈՅՔ

ԲՈՂՈՔԱԿԱՆ

## ԶՈՒՅԵՐ

Սարսենիոյ, Ֆրանսայի, Պատենի եւ Պառիերայի մէջ տեղն է՝ 22 վի-  
նակի բաժանեալ, եւ ունի 2,200,000 բնակիչ. մայրաքաղաքն է Պէռն  
ուր եւ 20,500 բնակիչ կայ. Զիւրիխ եւ Լիւսէռն ալ մայրաքաղաք հա-  
մարված են, որ առաջինը 44000 երկրորդն ալ 7000 բնակիչ ունին: Եւ-  
րոպայի մէջ այս երկրի նմանը չկայ, որ ահագին եւ անառիկ լեռներովն  
ու զմայլելի տեսարաններովն զքօսանաց տեղիք համարված է ազնուակա-  
նաց եւ հարուստ նանապարհորդաց: Այս երկիրը Հռոմայեցոց աստեղին  
Գալլիական գաւառաց մէկ մասն էր, իսկ Կեսարի արշաւանէն ի վեր  
Հռոմայեցոց անցաւ, ու Ե. դարէն մինչ ի 1307 Չանազան կառավարու-  
թեանց Տալը մնաց. սոյն աստեղին էր որ Կիլլիս-Թէլի ձեռով սպանըվեցաւ  
Զուիցերի Կէպլը անուն բռնակալ իշխանը, ու երկիրն ազատութեան ձե-  
մի առաւ: Նափօլէօսին օգնականութեամբ կառավարութիւնը հանրապե-  
տական անունն առաւ 1798ին, որ Միացեալ-Նահանգաց փոքր ինչ նմա-  
նութիւն ունի: Բնակիչք աշխատեալք, հարստիկ ու հաւատարիմ՝ արհես-  
տից եւ վաճառականութեան մէջ ալ Գերմանացոցմէ դեռ եւս առաջ են:



ՉՆԵՐՄԱՆ ԳՆԱԿ

ՊԵՐՏՆԱԿ




ԿՐԾՆԲ

ԲՈՂՈՒԹԱԿԱՆ

## ՄԻԱՑԵԱԼ—ՆԱՀԱՆԳ

Հի սխալին Ամերիգան, այսինքն, Ասլանեան ուկիանոսի, Գուպայի Մէքսիկայի եւ անոր ծոցին ու նոր Բրիտանիոյ մէջ տեղն է, որ 55 վիճակ ունի, եւ 55,500,000 բնակիչ. մայրաքաղաքն է Ուոշինգթոնը, ուր 528,000 բնակիչ կայ: Այս երկրին վիճակաց ամենն ալ առանձին կառավարութիւն ու սահմանադրութիւն ունին, եւ ամենն ի միասին *Ընդհանուր սահմանադրութեան* հպատակ են: Բրիտանո՞ւ Գոլմոյ 1492 ին զսաւ Լիզայեան կղզիներն, իսկ Վէնէտիցիի (ձօանի եւ Սեպասթիանի) այս երկիրները հետզհետէ զսան 1497 ին. յետոյ Անկլիացիի եւ Հօլանտացիի սկսան գաղթել եւ տիրել. երկրացիի 1773 ին ապստամբեցան ու Ուոշինգթոնին առաջնորդութեամբ սկսան պատերազմիլ Անկլիացոց դէմ եւ 1781 ին *Հանրապետութիւնը* հաստատեցին: Միացեալ-Նահանգաց (ինչպէս եւ Ամերիգայի այլ երկիրներուն) մէջ արհեստն ու գիտութիւնը շատ առաջ գացած է, երկրագործութիւնն ալ խիստ ծաղկած: Գաստիարակութիւնը քեպէտ փողոցացած է երկրացոց բնաւորութիւնը, բայց վայրենի անգործեան արմատը դեռ չէ կրցած բոլորովին խլել:



ՊՈԼՈՎՆԱԿԱՆ

ՏԵՐՈՒԹԻՆ



ԿՐՈՆԲ

ԲՈՂՈՒԿԱՆ

## Պ Ա Ի Ի Ե Ր Ա

Աւստրիոյ, Իսպիոյ, Ֆրանսայի եւ Սափսօսիայի մէջ տեղն է, եւ ունի 8 գաւառ ու 4,500,000 բնակիչ. մայրաքաղաքն է Միւնիխ ուր 152,650 բնակիչ կայ. այս գեղեցկաճէն քաղաքին մօտ է Պաւառիա անուն պղրն ձաձոյլ արձանը 20 մեթր բարձրութեամբ, որ մէջէն 124ոսփ սանդուխ ունի եւ յօնփ ներհակողմն ուք՝ բայց բոլոր գլխուն մէջ 30 մարդ նսելու տեղ կայ : Երկրին կլիման բարեխառն է եւ մեծաղի հանրով լեցուն : Օգոստոս կայսեր աստեղն ի վեր Հռոմայեցոց գաւառներէ մին էր Պաւիերա, իսկ Ե. դարուն՝ Պոնտիփացիքի Եկան տիրեցին, յետոյ Ֆրանկներն ու մեծն Կարոլոս. եւ երբեմն դիսուրիւն՝ երբեմն ալ իբրեւ քաղաւորութիւն մինչ ի 1312 տեւեց ու 1313ին կայսերութիւն եղաւ մինչ ի 1599 : Պաւիերա յուզման մէջ մնաց մինչ ի 1799. ու 1806ին քաղաւորութիւն եղաւ մեծին Նափօլէօնի ձեռնով : Տերութիւնն այժմ 50,000 զօր ունի. բնակիչք խիստ առաջ են գիտութեանց եւ արհեստից՝ դաստիարակութեան մէջ մանաւանդ՝ որով վերջի տարիներս գերազանցեցան բոլոր Գերմանիոյ վրայ : Այս երկրի մէջ կարդալ սովորելը պարտ է, չգիտցողն ալ դասապարտութեան ենթակայ :



ՊՆԿՈՂԵՂՈՂՈՂՈՂՈՂ

ՉԻՎՓԻՎԱԿՅ



ԿԲՕՆՔ

ՅՈՒՆԱԳԱԽԱՆ


### ՅՈՒՆԱՍՏԱՆ

Արեւելեան, Միջերկրական ծովին, Յունական կղզիներուն ու Ալպանիայի եւ Մակեդոնիայի մէջ տեղն է. որ ունի 24 մասն գաւառ եւ հազիւ 850,000 բնակիչ. մայրաքաղաքն է Աթէնք, ուր եւ կայ 19,000 բնակիչ: Յունաստանի հին պատմութեանը մէջ առանշեղիք պակաս չեն, սակայն արտաքին կարգի սուրբիւններն ալ այնչափ շատ են որ ծաղրելի կերպ մի առած է, եւ երբէք չէ գիտցրիլամ քէ տարածութիւնն ալ որչափ էր. Հաստատեալ քէ՝ եգիպտացիք (1643 տարի Քրիստոսէն առաջ) եկած ու Աթենքը շինած են, որ մեծնալով մինչեւ 80,000 բնակիչ ունեցած է, բայց աւերակացը նայելով չկարծրվիր քէ 60,000 ունեցած լինի: Քրիստոսէ 146 տարի առաջ Յունաստանը Հռոմայեցոց անցաւ, յետոյ Վենետիկցոց եւ 1456 ին Տանկաց. 1766էն մինչ ի 1804 Յունաստանի մէջ ապստամբութիւնը պակաս չէր, իսկ 1821 ին ոսք ելան ու մինչ ի 1830 պատերազմելով ամենափոքր տեւութիւն մի կանգնեցին: Այս ազգը քէպէս պարտենկոս, հպարտ, գիտութեան եւ արհեստից գուրկ՝ բայց յանդուգն է մանաւանդ վաճառականութեան մէջ, որով զինքը Հայոցմէ շատ վեր պէտք է սեպել:



## ԾԵՐԱԿՈՅՑ — ԺՈՂՈՎ

Հռոմայեցիք 750 արի նախ քան զՔրիստոս, *Սենարուս* անուամբ ժողով մի հաստատեցին, ուր 100 ձեր հաւերվելով հայրենեաց պիտոյն օրինադրէին: Սոցա թիւը մինչեւ 500 ի հասաւ. Քրիստոսն 600 արի առաջ Աթենք ալ ձերակոյտ ունեցաւ, 400 հոգիէ բաղկացեալ որ յետոյ 500 ի էլաւ. իսկ Սպարսացոցը միայն 28 հոգի էին: Երուպայի մէջ ալ ժողովները հետզհետէ շատանալու սկսեցան ու հնետուն պէս օրինաց եւ քաղաքական խնդրոց վրայ սկան պարապիլ, որոց մէջ Փարիզիներ հոջակաւոր լինելուն պատկերըն ալ դրինք: Ժողովին անդամները պէտք է ժողովրդեան քուէարկութեամբն ընտրուին: Անոնցմէ պահանջըրվածն են՝ հայրենասիրութիւն, եւ արդարութիւն: Ժողովը նախագահ մի ունի, որ առանց անոր հրամանին պէտք չէ խօսիլ. մէկ (կամ առ երկ) գրագիր եւս ունի ամէն բան արձանագրելոյ համար: Երբ որ անդամներէն մէկը խօսել սկսի պէտք չէ պատասխան տալ անոր՝ առանց հրաման առնելոյ նախագահէն, բայց եւ այնպէս սպասելու է որ խօսին աւարտէ, երբ որ ժողովն ինչ եւ իցէ խնդրոյ վերայ վիճէ ու դէռ անհամաձայն մնայ, նախագահին պարտքն է քուէարկութեամբ որոշել. կամ ձեռք վերցնել խօսիլ՝ կամ թողիկներու վրայ այն կամ ո՛չ գրել խօսիլ՝ այս չափը չպիտոյն ազգը՝ վայրենի կարծրված է միտք, եւ է:




ՎԵՑԵՐՈՐԳ

Մ Ա Ս


ՀԱՅԱՐԵՍԿ

Ք Ա Ղ Ա Ք





5




## ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Եւրոպան Ասիայէն զատող Պօսփօր անուն Նեղուցին մօտ, իր դիւար աշխարհիս ամենէն զեղեցիկ քաղաքաց մէկն է. որ հնուց Քիւզանդիս անուն ունէր, եւ յետոյ Կոստանդիանոս Կայսեր անունն առաւ, ու Հռոմի կայսերութեան բաժնրվելէն (395) ի վեր Կայսերանիս լինելով հոյակապ շինարարք մեծացաւ: Նոյն ասեմէն ի վեր՝ Կայսերութեան բնակիչները, իրենց վրայ սիրող ցեղին անուամբ սկսան ինքրզինքնին *roikou* կոչել. սիրող ցեղն ալ երկրին լեզուն ընդունելով՝ խառն ազգութիւն մի ձեւացուց. բուն *կոկի*՝ ազգն ալ (որ բիւրախառն ցեղերէ բաղկացեալ՝ արդէն խորացեր էր) նոցա յարելով ամէնք միասեղ եղան ազգ մի *Ռօւսկօն* անուն, որոց սեռը ազնուացնելն անելի դժուար է քան Բօւայիցն, որ *Սիւնկացի գաղթական եմի*՝ ըսելով՝ կարող են գննէ ծագումնին հաստատել: Կ. Պօլսոյ մէջ (Արեւալուսի-Արժուսի) Հայազինք ալ Կայսր եղան: Օսմանցիք 1357 էն սկսեալ ասեն ասեն արձակեցան այս յիմար եւ հպարտ Տերութեան վրայ. իսկ Մահամէտ Բ 1453 ին տիրեց Կ. Պօլսոյ եւ անունը դրաւ *Խսթալ-Պօլ*: Այս քաղաքին դրսի երեւոյթը նրչալի որ սմանչէլի է նոյնչալի ալ ներսի կողմը զազիր է: Փողոցներ՝ մանաւանդ հնուց շինված տները խիստ անկարգ եւ անկանոն են. սակայն հոյակապ մզկիթներն ու անհամար շէնքերն այնպիսի զեղեցկութիւն տուած են այս քաղքին, որ *Թագուհի Արեւելեան* կրնայ կոչվիլ: Բնակչաց թիւը միլիօնի չափ է, զրեթէ կէսը Տանիկ ու կէսն ալ Հայ, Յոյն, Հրէա եւայլն. որոց ամենէն բազմաթիւը Հայք են: Յունաց Կաթողիկոսական եւ Հայոց Պատրիարխական (երկրորդ) Աթոռներն այս տեղ են: Հայոց *Բարձրագոյն Ժողովրդայն* Տանկասանի Հայոց *ազգային գործերուն* վարչութեան պալատն ունի, եւ հսկող ու կարգադրող է ամէն բան՝ ընդ Նախագահութեամբ Պատրիարխին: Բաղաճիս Հայ բնակչաց քրտնօրէիւնն ու հեռատես գործունէութիւնը՝ երբէք ուրիշ տեղերու Հայոց հետ չհամեմատիր: Եւ յիշալի, Հայոց ազգայնութեան բոյնը համարված է այս երեւելի քաղաքը, զոս խնդիրներու մէջ: Հայոց տգէտ մասը սովորութիւն ունի Տանկերէն խօսելոյ իսկ լուսաւորեալը՝ մանաւանդ կանայք միշտ Հայերէն, որ զոս քաղքը եւ հոսակ է: Կանայք ընդհանրապէս բարեկիրք են, որոց դաստիարակութեան մեծ հոգ տարին Հայք վերջերս, որով Հայունեաց զիրքը եւ սրամտութիւնը երեւան էլնելով՝ սկսաւ Հայոց հոչակը Եւրոպոյ մէջ տարածիլ:




## ԷԶՍԻԱԾԻՆ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Մասեաց հիւսիսային կողմը, Վաղարշապատ քաղաքին գրեթէ կից, Հայոց առաջին և Կաթողիկէ եկեղեցին և Արեւիկունեաց աւետեան ի վեր ամենէն սրբազան ու պատուաւոր Արտուն է Քահանայապետաց ամենայն Հայոց, որոյ ձեռք Քրիստոս ինքն զժամ ու սրբոյ Հորն մերոյ Գրիգորի Լուսաւորչեայ՝ տեսիլով յայտնած է. որ և ևա Տրդատ արքային աւետեան 354 ին այս սրբազան տաճարը շինեց ու *Էջ միածինն* անուանեց, և հոն հաստաց Արեւելեան ընդհանուր և գերագոյն Քահանայապետական սրբազանագոյն Գահը, ուր մինչև ցարդ 143 Կաթողիկոսունք բազմեցան, և Այծմեանն է Կոստանդնուպօլսեցի, Տէր Մասթէա Ա. Վեհափառ Սրբազան Կաթողիկոսն, որ է Լուսաւորչածառանց Իսխան հոգեւոր, Ռուսիոյ, Տանկասանի, Պարսկասանի և ընդհանուր Հայոց: Էջմիածնայ հոյակապ վանքին մէջ է Սուրբ Սիւնդոսն որ 1837 ին Ռուսաց կայսրը հաստաց Հայոց հոգեւոր վարչութեան համար. որոյ Անդամն են Եպիսկոպոսունք և ձեռագոյն Վարդապետք ընդ հովանեաւ Սրբազան Կաթողիկոսին: Վաղարշապատ, որ այժմ աւան մի է, մեծն երուանդ շինեց 2310 տարի առաջ. և յետոյ Վաղարշ արքայն Հայոց՝ վերանորոգելով իր անուամբը *Վաղարշապատ* կոչեց զայն, ուր հնուքիւնք հազիւ հազ տասնիւն այժմ:



## ԵՐԵՒԱՆ

Մասեաց հիւսիսային՝ ու Էջմիածնայ արեւելեան կողմն է, *Ձիկկի* գետին վրայ շինեալ, որ հիները *Հրազդան* անուանէին, Սյս քաղաքը հիւնուց աւան էր եւ քաղաքացեաց ասեմէն ի վեր՝ Պարսից եւ Տանկաց ձեռք մնաց, որք *Փաշա* կամ *Սեքսար* անուն կուսակալներով կառավարէին զայն : Ռուս 1827 ին տրեցին, եւ քաղաքից զօրապէսն (որ այս քաղաքը պատերազմաւ առաւ) *Իշխան Երեւանայ* կոչեցաւ : Ռուս Երեւանայ բերդն ու կամուրջը վերանորոգեցին ու 1841 ին *Մայրաքաղաք* անուանեցին Ռուսեան—Հայասանի բոլոր Նահանգին : Երեւանայ մէջ 20,000 բնակիչ կայ այժմ, վեց քաղ եւ այնչափ եկեղեցի : Պատմութեան մէջ արիւնհեղութեան կողմանէ երեւելի է այս քաղաքին բերդը, ուր անհամար Հայեր՝ մանաւանդ Հայուհիներ երեւակայութենէ դուրս արհամարհանք կրած, չարչարված եւ արիւն քափած են բարբարոս Պարսից եւ անգութ Թրքաց ձեռքէն : Քաղաքիս հիւսիսային կողմը ժամ մի հեռաւորութեամբ *Քակաֆեռ* անուն հին գիւղ մի կայ, որոյ համար կարծրվի թէ Քամ նահապետն ու նորա բերդ շինած են : Հերակլ Հայկազուն իբխանը (որ Վրաց վերջի արքային ու Հայկազն քազու հոյն որդին է, եւ որոյ քաղցր տեսութիւնը վայելեցինք ի Փարիզ), այս քաղաքին մէջ ձմած է :



## ՎԱՆԱՅ ԾՈՎ ԵՒ ՎԱՆ

Մեծին Հայասանի մէջ տեղն է այս մեծ եւ գեղադիր լինն, որ 60 մղոն երկայնութիւն եւ 50 լայնութիւն ունի, ուր բազմաթուաց մեծերն են՝ *Աղբաւար, Առսկր, Կտուց* եւ *Լխոլ* կղզիները՝ վաներով եւ բնակութեամբ զարդարեալ: Այս ծովուն շրջապատի դիմեմ ու գեղեցկութիւնը, օդին անարասութիւնն ու երկիրներուն պողաբերութիւնը՝ զմայլեցուցած է՝ ոչ միայն արդի համբողջներն այլ եւ Շամիրամ քաղաքին, որ Քրիստոսէն 1742 տարի առաջ եկաւ ու Ծովայն արեւելեան եզերքի բարձրադիր եւ սխանջագեղ ժայռերուն վրան ամառանոց շենեց *Շամիրամսկիւրս* անուն. յորմէ 1592 տարի յետոյ, Վան Հայկազուն քաղաւորը զայն նորոգելով իւր անուամբը *Վան* կոչեց: Իսկ Վաղարշակ արեւոյն Հայոց՝ առաւել զարդարեց բերդերով եւ հոյակապ շինութիւններով: Բնական դիրքով եւ բերդերով այնչափ ամրացած էր Վան քաղաքը, որ Լէւկոսթիմուր անգամ անհամար զօրովը՝ չկրցաւ (1592 ին) դիւրութեամբ տիրել եւ ստիպեցաւ պատերազմիլ 42 օր: Այս Հայաստանի քաղաքին մէջ հազիւ 40,000 բնակիչ կայ (այլակրօնաց թիւը չենք զատեր, զի նոքա Հայաստան էն), իսկ այլեր եւ սեպածեւ արձանագրութիւնք բազմաթիւ են: Բոլոր զաւտըր պտուղներ է՝ մանաւանդ մեխակ, գինին, պտուղն ու մեղրը ամենապատուական:



## Պ Ա Յ Է Չ Ի Տ


Մասեաց հարաւային կողմը՝ *Կոզուլիս* գաւառին մէջ՝ բուն Հայաւելն փոքր քաղաք է. որ պատմութեան մէջ անդապար պատերազմերու դիմադրելով՝ իր հին շէնդուքիւնը կորուսած է. այժմ աւան դարձած է: Երեւի քէ Հայոց կուսապետութեան ասեմը մեծ ուխտատեղի էր այս քաղաքը. վասնզի հին կուսան մէկ մասը մինչեւ հիմա մնացեր է, խորվիրայի ձեւով. ուր Հայաքաղցն ամբողջ արձանը է. անոր քովի Հայ *քրտապետիկը*, (պատշաճութեամբ էւ զոհագործութիւն կատարելու ձեւով) դեռ կեցած են: Ռուս 1828ին տիրեցին այս քաղցին, նոյնպէս էւ 1854ին, էւ դարձեալ ձգեցին Տանկաց: Առաջին անգամ բազմաթիւ Հայ գացին Ռուսաց հետ, 100 սրբուորի չափ ալ Կարբի գիւղը գաղթեցին ու 1800 ճեղն հազար 300ը մնաց: Այժմ հազար 12,000 բնակիչ ունի, Հայ էւ այլազգ, էւ հին եկեղեցիներուն աւերակներէն ու միջնաբերդէն ուրիշ բան չեւիր. իսկ վանառակաւորքիւնը բաւական շարժման մէջ է՝ մանաւանդ Վրաստանի էւ Պարսկաստանի հետ: Պայէզլիսի մօտ է հռչակաւոր Արժափ-Քերդն, ուր 3,000 այլազգի (644 ին) մտեր ու բնակիչները սանելու վրայ էին, երբ Թեոդորոս Ռոստոմի քաջ նախարարը կայծակի նման հասաւ էւ 600 զինուորով այլազգեաց մինչ ի վերջի թիւը ջարդեց էւ Հայաստանն ու գերիին ազատեց:



## Թ Ի Յ Լ Է Զ


Էջմիածնայ հիւսիսային կողմը (43 միջնաւ հեռի) Վրաստանի մէջ *Կուր* գետին վրայ շինված՝ հին ասերը արքայանիստ եւ այժմ վանառաւան ու գեղեցկադիր քաղաք մի է, Կոստանդնուպօլիսէն 500 եւ Փէթերգպուրկէն 587 միջն հեռաւորութեամբ, որոյ համար ասեն թէ Վաղարանկ քաղաւորը շինած է 469 ին: Ճինկիզ-Խան (1210 ին), նոյնպէս եւ Մուսամա-Փաւա (1576 ին), քանդեցին այս քաղաքը. իսկ Մօհամմէս-Խանն Պարսից՝ հիմնադրեց ըրաւ 1796 ին: Վերջապէս 1801 ին Ռուսաց անցնելով սկսաւ ծաղկիլ իսկ 1850 ին Հնասխար (*Քօրէնա*) 33,000 բնակչաց կէտը կոտորեց: Այս Հայքեանկ քաղաքը, որ այժմ 60,000 բնակիչ ունի, Կովկասու եւ Պարսկաստանի վանառասունն է: Թիբլիզի Վրացիք սնոսի սովորութիւններով՝ փնածաց, անպիսան եւ փսած մարմին դարձած են: Հայոց սրամտութիւնն ու վանառականութեան մէջ ունեցած ժուրիւնը զարմանալի է՝ եւ անոր նամար է որ օտարազգիք առ նախանձու բամբասան զՀայս իբրեւ խարդախ: Կան Հայեր որ Վրացոց կապիտրիւն ընելով՝ պրըրեկած են անոնց, ու չեն ուզեր Հայերէն խօսիլ եւ գրել. բայց սոքա փոքր եւ անպիսան մասն են, քանի որ մեծը՝ Հայկական ազնուութիւնը կասարեալ պահած՝ խնամ եւս ունի բարեկրթութեան միջոցներուն վրայ:





## ԿԱՐԻՆ — ԷՐԶՐՈՒՄ

Տրապիզոնի հարաւային արեւելեան, ու Կարսի արեւելեան հարաւային կողմը, Եփրատ գետէն փոքր ինչ հեռաւորութեամբ՝ հնուց երեւելի էւ մեծաւն մայրաքաղաք է Հայոց Կ. Պոլիսէն 273 մղօնաւ հեռի . որ 413 ին ասեմներ շինվեցաւ : Այս քաղաքը շատ անգամ ոսնակոյն եղաւ օտարաց , բայց ամենէն զգալին Թաթարաց հարուածն էր , որ 1242 ին այրեցին ու բնակչաց ամբողջը քրէն անցնելով հիմնայասակ ըրին : Վերջէն Օսմանցիք (1517 ին) շիրեղով բերդերը վերանորոգեցին : Ռուս 1829 ին առին ու դարձեալ Տանկաց բողոքցին : Այն ասէն բազմաթիւ Հայք ելան դէպ ի Ռուսային Հայաստան գաղթեցին . իսկ 1859 ին երկրաշարժը եւս առատել նուազեցուց բնակչաց ու շինութեանց թիւը : Այժմ 60,000 ի չափ բնակիչ ունի , եւ բերդերն ու հին շէնքերը բոլորովին անհետ եղած չեն , նոյնպէս եւ 10 էն աւելի մզկիթք (որ ասեմով Հայոց եկեղեցիք էին) ամենազեղ զարդարանքն են այս վանառաւան քաղաքին , որ ասեմով *շեւարսու շնդիաց* անունն ունէր : Գաւառէն ելածներն են , կապար , պղինձ , երկաթ , մարմարիօն , յասպիկ , ալքաստ , մելխիկ , սպազիօն եւ պասուական ձի , մանաւանդ թուր՝ որ խիստ ազնիւ է : Եթէ Տրապիզոնէն մինչեւ Էրզրում ուղիղ համբայ շինվի կարելի է որ առաջին պայծառութիւնը գտնայ :



## Կ Ա Ր Ս

Շիրակայ դաշինն հիւսիսակողմը, Անի քաղաքէն 20 մղոնի չափ հեռաւորութեամբ, որ Բագրատունեաց ասեռն խիստ ծաղկեալ՝ 961 էն մինչ ի 1064 Հայոց ինքնագլուխ քաղաւորաց մայրաքաղաք եղած է: Ունէր քաղաքիւ բնակիչ, հոյակապ շինութիւնք եւ ամրակառոյց բերդ, որոց անբահներէն երեսի թէ՛ սրչափ պատերազմերու սակ հեծեր ու դեռ չեն սկարացեր: Աբաս Բագրատունի Արաբազունը (891 ին) Սմբատ արաբէն ապստամբելով՝ ամրացաւ այս քաղաքին մէջ եւ ինքզինքը քաղաւոր կոչելով՝ ազգային պատերազմի պատճառ եղաւ ու վերջը յաղթվեցաւ: Իսկ 961 ին Ասոս Բագրատունի արաբիսն եղբայրը Մուսեղ՝ Բ. քաղաւոր օժվեցաւ Կարսի մէջ: Պարսիկք (1050 ին) յանկարծ հոս մտան, ու բնակիչք սաստիկ ջարդելով անբահ դարձուցին: Գազիկ քաղաւորն Աբասեան տեսնելով որ Ափսսական Անուոյ շիրեց՝ ինք ալ (1064 ին) վասաբար Տերութիւնը յունաց ձգելով Ամասիան անոր փոխարէն առաւ: Ռուս (1828 եւ 1854) Տանկէն առին ու դարձեալ թողուցին: Հայոց արաբաշէն հոյակապ եկեղեցին այժմ մզկիթի փոխված է: Հայերէն 5,000 ի չափ 1828 ին գաղթեցին ու Կիւմրի գիւղը նորոգելով Ալէքսանդրօպօլ կոչեցին. ուր այժմ կայ 16,000 ի չափ. Բանի որ Կարսի բուն բնակիչք 12,500 ի չափ հազիւ կան:



PEGARD


## Ս Ի Ս

Կիլիկիայ որ Արամայ, Տիգրանայ եւ Ռուբինեանց ժամանակը Հայոց իշխանութեան սակ ընկած էր՝ Փոսր Հայք կոչեցաւ. սահմաններն էին արեւելեան կողմէն *Sornu* լեռան շրջան ու Եփրատ գետը, հիւսիսէն Կասպաղովկիան ու Դոնեայի գաւառը, արեւմուտէն Պանփիլիան ու Միջերկրականը եւ հարաւէն Կիլիկեան ծովն ու Հալէպի գաւառը: Այս բարեբեր, ընդարձակ ու պստուական երկիրն այժմ Տանկաց ձեռք է, եւ ունի 500,000 բնակիչ, որոց 260,000ը Հայ՝ մնացորդն ալ Թիւրքմէն, Ալեւար, Քիւրս, Եզիս, Արապ. մի քան զմի բարբարոս, վրանաբնակ եւ անպիսան ցեղեր: Հայոց տէրութեան ասէն 80էն աւելի քաղաք ունէր այս երկիրը: Այժմ Զէյթունի եւ Հանինի կողմերու Հայերը միայն ազատ կեցած են՝ եւ թէպէտ իսիս քաջ՝ բայց զուրկ ի զիստութեանց եւ յամենայն բարեկարգութեանց. Սիս արքայանիստ քաղաք էր Ռուբինեանց ասէն 1200էն մինչ ի 1375. իսկ այժմ աւան դարձած հազիւ 2,500 բնակիչ ունի, բայց իր հոյակապ շինութեանց եւ բերդերուն մնացորդները ապշեցրնեն զմարդ: Կիլիկիոյ մէջ անտառներ, անմեծեծաւի լեռներ եւ զանազան նիւրի՝ մանաւանդ երկաթի հսկմ շատ կան: Երկիրը բարեբեր է. իսկ յոյս չկայ որ բնակիչներովը ծաղկի եւ Հայ քաղաքականութեան կարօտ է:



## ՏԱՐՍՈՆ

Կիլիկիոյ հարաւային կողմի դաւեսեռուն մէջ *Կիւղնու* գետա կին վրայ շինված, այնչափ գեղեցիկ դիրք ունի այս քաղաքը, որ ասենով *քազունի Ասիոյ* անունը ունէր՝ գաւառին առաստաբերութեան ու իր դրից առաւելութեանը համար, որ հին ասենէն ի վեր ամենայն կերպիւ սիրած է Կիլիկեան ծովին՝ մանաւանդ իր վաճառականութեամբ: Ռուբինեանց իշխանութեան ասեն՝ Լեւոն Ա իշխանը 1123 ին սիրեց ու փոքր Հայաստանին առժամանակեայ մայրաքաղաք ըրաւ, ուր 1198 ին՝ մեծ Եւխանն Լեւոն Բ, Ս. Սօփիայ եկեղեցոյն մէջ քազաւոր Հայոց օճեցաւ Լեւոն Առաջին անուամբ: Այն ասեն երեւելի նեմարան, դպրոցներ՝ մեծամեծ շէնքեր եւ 80,000 բնակիչ ունէր այս քաղաքը. իսկ այժմ հազիւ 10,000 ունի, ուր եւ Հայ արձանագրութեամբ շինութեանց աւերակները միայն մընացած են: Տարսոնին արեւելեան կողմի Ասանա քաղաքը, որ *Սարնու* գետին ափը շինված է, 25,000 բնակիչ ունի, որոց 12,000ը Հայ են: Մառաւ ալ (*ձիհասն* գետին վերի կողմը) Կիլիկիոյ երեւելի քաղաքաց մէկն է 18,000 բնակչոյ, որոց 11,000ը Հայ, ու մընացորդը Քիւրս, Աւար, Տանիկ, Արապ եւ այլն այսպիսի անպիսան, սգէտ, վրանաբնակ եւ բարբարոս ցեղերէ բաղկացեալ խումբեր են:



## ԶԷՅՅՈՒՆՑԻՔ

Ռուբինեանց տրուքիւնը բառնալէն յետոյ փոքր Հայաստանի, այսինքն Կիլիկիոյ բնակչաց ամէնն ալ չընուանեցան, այլ ոմանք քանի մը տառապաս տեղեր ապաստանեալ անհամար բեռամեաց դէմ անդադար պատերազմելով երկայն ատեն ազատութիւննին պահեցին. եւ թէպէտ հպասակեցան վերջապէս Տանկաց, բայց անոնցմէ ապստամբող վայրենի պէյրուն ու իշխաններուն անիրաւ եւ ապօրինաւոր պահանջանաց երբէք չըզիջան ու մինչեւ ցայս օր՝ թէ մասնաւոր պատերազմներով եւ թէ օրինաւոր բողոքներով ցոյց տուին տանկաց՝ որ իրենց տրուեցնէն ապստամբող վայրենեաց կատաղութանը հարակ լինելու համար ծնած չլին: Այս այն ժողովուրդն է որ Զէյթունի եւ Հանիւնի լեռնապատ սահմաններուն մէջ տառաւաղով՝ իրեն պատշապանութանը համար պէտք եղած ամէն բաները շինեց մինչեւ ցայս օր: Հայոց շինած հրացաններն ու ասհանակները, զորս ձեռով շահապէցինք, զմայլեցուցին զեւրոպացիս, եւ եթէ այս սրամիտ եւ քաջ ցեղին դաստիարակութանը՝ հոգ տարվէր Հայոց ազգն ալ իրեն վայելուչ պատերազմ կատարած՝ Աստուծոյ եւ մարդոց առջեւը պիտի արդարանար: Հոս դրվածը 500 տարի առաջ իսպաղի համբողջի մը նկատուած պատկերն է, որ Կարս քաղաքին ետեւի կողմին շատ նմանութիւն ունի:



## Ի Չ Մ Ի Ր

Փոքր-Սախոյ արեւմտեան՝ եւ *Արշիպէրագոս* ծովոյն արեւելեան կողմը իւրանուն ծոցին վրայ՝ գեղեցիկ, բազմամարդ ու վաճառաւան քաղաք է, որոյ բնակութիւնը յոնիական գաղթէն սկսեալ է, ասեն, եւ կարծիք եւս կայ թէ Հոմերոս հոն ծնած է։ Այս հռչակաւոր քաղաքը զանազան կառավարութեանց տակ իյնալէն յետոյ՝ 1402 ին Քամէրլանի ձեռք անցնելով անբաւ դարձաւ, վերջապէս 1422 ին Տանկաց անցաւ որ մինչեւ ցայժմ տիրեցին։ Հին ասենին այս քաղաքը զիստութեամբ ծաղկեալ էր, եւ այժմ առաւել եւս է Տանկաստանի քաղաքաց մէջ. եւ ունի 160 հազարի չափ բնակիչ. որոց մէջ ամենէն սրամիտք, լուսաւորեալն ու աւելոյժը Հայերն են. եւ թէպէտ 6000 ի չափ, բայց իրենց ժուրութեամբ համբողջներուն այնպիսի ազդեցութիւն տուած են՝ որ միտք կարծուած է թէ *Իզմիր Հայոս քաղաք է*։ Եւ յիբրաի, Տանկաստանի Հայոց ամենէն ժիւրերուն կարգը համարված՝ եւ մասամբ իւրի ազգայնութեան նշանաւոր նեցուկն եղած են՝ թէ Լրագիրներով եւ թէ կարգաւորեալ Գայրոցներով։ Թող զայնս որ իրենց բարձրաստիճան վիճակաւ Ազգին պատիւը զարգացուցած են օտար երկիրներու մէջ։ Այս քաղաքը անուանի է՝ մանաւանդ իւր վաճառական յարաբերութեամբ, որ ունի ամէն երկրի հետ։



## ՆԻԿՈՍԻԴԱ. — ԻԶՆԻՄԻՏ.

Մարմառայի ծոցն է, մայրաքաղաք Բիթանիոյ, որ Նիկոմիդիա քաղաքը նորոգեց 280 ին (Ք. առաջ). ուր իր յաջողութիւնը հոյակապ բերդ ու պալատներ շինեցին: Մեծն Անիբալ հոն մեռաւ. Կեսար իւր պատանեկութեան մէկ մասը հոն անցուց. Արիանոս մեծ պատմաբանը Նիկոմիդիա ծնաւ. 105 ին. Գիուլլէիանոս որ հոն Կայսր անուանեցաւ՝ կեանքն ալ գրեթէ անցուց, որուն (Եւ. այլոց) շինութեանց մէկին աւերակը՝ դեռ 1856 ին անհետ եղաւ. ամենայն ձեռքով: Այս քաղաքը 580,000 բնակիչ ունէր Եւ Կոստանդիանոսի ատեն կայսերանիս բնելու խնդիր կար: Այժմ հազար 18,000 ունի, որոց 4,500ը Հայ: Գաւառին մէջ 41 Հայազիւղ կայ: Երկիրը գեղեցիկ է Եւ բարեբեր, իսկ մէջի լճակներէն օդը միշտ ապականութեան մէջ է՝ Եւ այնպէս պիտի մրնայ մինչեւ որ Սասանիանայի լինը ծովին յարի Եւ գետափը ծառեր սնկըվին: Քաղաքիս Հայոց ուսումնական մասը սրամիտ Եւ խիստ բարեկիրք է. իսկ ուսումնասեաց մասի՝ մանաւանդ կանանց վիճակն աղետալի Եւ կոպտութիւնը կարգէ դուրս է. որք քէ հազուասով Եւ քէ բարձր՝ աւելի նման են *հրեից* քան բարեկիրք *սրիսունից*. Եւ աւելի պատրաստ են *կրօնս* փոխելոյ քան զայլանոց *քարս*: Յաւ է մեզ մեր քաղաքացաց վրայ այսպէս խօսիլ, բայց անկողմնասիրութիւնը մեզ սխալեց:

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.





ԵՕԹԵՐՈՐԳ

Մ Ա Ս

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ





ԶՐՀՈՍ



ՊՈՒԲՃԻՏԷԼՎ

### ՅՈՒՆՎԱՐ


Ամայս սկիզբին՝ ամէն վիճակի մարդոց պարսն է հաւուէտօմարս վերսուզել . երկրագործին ալ , եթէ օղբ ներէ , Գարնան հնձելիք երկիրները հերկել . Թբենի եւ այլ ծառեր սնկելիք տեղերը խորափորել ու փոսերը պարսասել , ուռիները եւ բուսիները կտրել , անայիտան ու վնասակար խոտերը խլել , աղբերը պարսասել ու չոր մարգագ վրայ դիզել : Զիւնի եւ սառի ասեմ՝ պէտք է երկրագործական գործիք վերանորոգել կամ արել , կողովներ ու փեթակներ շինել , այգիներու համար ցիցեր պարսասել ու անոնց ծայրերը արել , եգիպտացորենը հասել : Պէտք է նաեւ կենդանեաց վրայ մասնաւոր հոգ տանիլ , նոցա բնակութիւնը ցրտէն պահպանել ու կերակուրեմին սովորականէն թէ՛ սաք եւ թէ՛ աւելի



սալ . յիի ոչխարներն այլոցմէ գասել ու ծնողներուն վրայ մասնաւոր հոգ տանիլ որ չմտնին . պէտք է նաեւ մեղուաց փեթակին վրայ հսկել որ ոչ ցրտէ մտնին , ոչ ի բռնամեաց նեղվին եւ ոչ առանց կերակուրի մընան :



ՉՈՒԿ



ՀՈՒԹ

## ՓԵՏՐՎԱՐ

Ասեն է՝ սերմ եւ կենդանի գներոյ կամ ծախելոյ : Շեմարանք պէ՛տք է հովոսել, չոր խոտերուն մէջի փսածներն ու ծառոց կամ իրենց արմատներուն հիւանդ ու չորցած կողմեր կտրել, աղբը կամ պարսարս հողը դիզելն ալ շարունակել ու հնձրված երկիրները սափանել՝ որ սերմերը քաղվին. առուններ մաքրել, եւ եթէ վայրի կաղամբ ալ ունիս՝ կորի՛ն վրայի սերէւները պէ՛տք է վացրնել որ գլուխնին զօրանայ : Ինչ բանի որ հունսն առնելոյ միտք ունիս՝ պէ՛տք է հիմա սնկել որ զօրատը լինին : Գարի, Փաքաք, Բակլայ, Ծխերդ (*բիւրիւն*), Մեկոն (*հաշիւաշ*) եւ Հանար (*շալսար*) ցանելոյ, պտղատու ծառերը սնկելոյ, հոյնպէս քէ որ օդը բաց ու բարեխառն երթայ՝ որքը յօտելոյ ասենը հիմա է : Ամառս մէջ կենդա-



նեաց ախոռը պէ՛տք է սաւցրնել, ձիտու կերակուրն ու աշխատանքը աւելացնել, խոզերու սնակի խոտը բիչցրնել՝ որ ձագերն անոնցմով չըխտողովին : Պէ՛տք է տար փեթակներն օգտակալ եւ կամ մեղրով կերակրել :



Խ Ո Յ



Հ Ս Մ Է Լ

## Մ Ս Ր Տ

Սերմանված սեղերը պէ՛տք է հսկել, ծառոց արմատներուն փոսերը դի-  
սել ու քէ որ լեցված են՝ մաքրել . Անուան հունձներուն վերջի սալիանը  
ես գարնելով՝ կնիկի հողերը փերել, Գարնան գործածելիք աղբերուն  
կրելն ալ աւարտել : Ասեմ է՝ Ոսպ, Սեպտիլին (*հալունձ*), Կաղամբ (*շա-  
հակա*), Բանջար, Եղերդ (*հիկնիպա*), Հազար (*մսոռոյ*), Տորն, Մանա-  
նեխ (*հառսպ*) ցանելոյ, նաեւ Գարի, Վարսակ (*իյուրաք*), Մեկոն եւ  
Կանեփ կարող ես ցանել . նոյնպէս եւ Փարսք, Գեհնալսնձոր ու Որք  
սնկել քս մեծ ծառերն ալ պատուաստել : Զիերուն աշխատանքն ու կերու-  
կուրն աւելցրնելը պէ՛տք է շարունակել, կովերուն ալ նորտեղէն փոք  
առ փոք դադրեցրնել ու չոր ուտելիք տալ, ոչխարներն արծելէն սուսպ՝



առտու երեկոյ պէ՛տք է անոնց՝ գարի կամ յարդ, երբեմն ալ փերած ցո-  
րենով խառն աղ տալ . եւ երբ խոզերու ձագեր ունիս՝ պէ՛տք է գայնս  
կարէն կտրել : Մեղուններուն փերակացը վրայի ցեցերը պէ՛տք է մաքրել :



ՅՈՒՆ,



ՍԷՎԵՐ

## ԱՊՐԻՆ

Գոմերուն եւ ախոռներուն վրայ պէտք է հսկել, մտրել զանոնք եւ հովոսել: Մտրի մէջ՝ վարասի եւ գառի սերմանած տեղերը՝ պէտք է սափանելով հողերը փերել: Նորասունկ որբերուն հովի ցիցերը պէտք է ջրնկել, նոյպէս եւ հիններունը որ ձմռան սկիզբին հասած ու մէկ դի ժողված էիր: Ոչխարներուն՝ զոնէ շարքան անգամ մի՛ պէտք է աղ կերցնել ու կթելով պանիրն ալ շինել. գառերը փարախին մօտերը պէտք է արծել եւ անձրեւէն զգուշանալ որ չվնասին: Տափ կիսմաներու մէջ Թրեմաստանը մտրս ամսոյն սկիզբէն պէտք է վերստին փորել. իսկ տեղ կայ որ այն զործողութիւնն այս ամսուան ձգած էն. նոյնպէս եւ Իսնորդի (*Խիկ/սիհօնի*) հուններուն արբընցնելը Թրեմեաց տերներուն ուժ կամ կանուխ



ծելէն կախում ունի. ուստի ամսոյն սկիզբին ընդհանրապէս՝ կամ միջին պէտք է արբընցնել: Փերակները ցրտն ու անձրեւէն պէտք է պաշտպանել, փերակաց մօտերը գետ կամ լիճ էրէ չկայ՝ պէտք է մեղրուներուն ջուր տալ:



ԵՐԿՈՒՈՐ



ՃԷՎՉԱ

## ՄԱՅԻՍ

Զմայլելի եւ գեղեցիկ բնութեան գոյնզգոյն սմանչելիքն՝ ամենէն աւելի ամառայ մէջը վայելեն, արարածք Աստուծոյ կողմանէ, ուսի եւ անոր համար է որ մայիսը ԳՐԱՅԻ արիւս ալ կոչեր են: Մայիսի մէջ պէտք է ցորեանց՝ մանաւանդ ծառոց մօտը՝ վայրի խոտերը բաղել, ծառոց արմատի հողերը բրբրել, կենդանիքն արածել եւ կամ կանաչ խոտերով սնուցանել: Եգիպտացորենի, Կանեփի եւ Շուգամի սեղերը պէտք է հերկել ու հնձել. Բանջարին, Ծխերդին եւ Կաղամբին արմատները կրկին մշտելով սեղմել, նոյնպէս եւ աղբերուն դեղերը ջրել՝ որ չգոտսին: Կենդանեաց ախտոն ասէպ պէտք է մաքրել եւ աղբերը դուրս հանել. ձիերուն վրայի բրփինն զգուշութեամբ պէտք է սրբել ու կանաչի հետ խառն՝ չոր խոտով



սնուցանել: Որբերուն ասկը պէտք է փորել ու նիւղերն ալ ցիշերուն կապել: Իսնորդն ամառայ մէջ բաւական մեծացած ու դարմանի կտրօտ է: Մեղուաց պարբը (օղուր) պէտք է առնել ու նոր փէրպիտց մէջը դնել:



ԽՆՅԳՆՏԻՆ



ՍԷՐԷԹԱՆ

### ՅՈՒՆԻՍ

Կենդանեաց ախոռի դռներն ու պատուհանքը պէ՛տք է բանալ ու վա-  
րագուր կտխել՝ որ կենդանիք հաններէն ազատին եւ ախոռն ալ հովոտի :  
Անմեակ արեերը պէ՛տք է հերկել ու ջրային տեղերն ալ չորցնել . բուսիերը  
կտրել կամ վառել , ձմռան փայտերն սկսիլ դիզել , առուներուն մէջի  
խոտերն սկիւլով ջրանցնել ալ մտրել : Այգիներուն մէջ զգուշութեամբ  
պէ՛տք է երջիլ՝ քանի որ սիւղերը դեռ ամբացած չեն : Մարտի ծնած ձիւերը  
պէ՛տք է փոքր առ փոքր գործածել , ոչխարները զով ասեղի միայն արծել  
ու գիւրերն ալ անմեակ արեերուն վրայ քողով , սեւալ լուանալ ու բուրդը  
կրնտել , եւ խոզերն ալ նոյնպէս լուանալ . հաւերուն՝ մանաւանդ հնդ-  
կահաւերուն քրշած կամ ուռած զարի՝ կամ այլ հնտեղէն պէ՛տք է կերցնել



ու նորածին մեղուները գնել կամ ծախել : Յուրս երկիրներու մէջ Խնուորը  
վերջի *արատին* է այս ամսոյս մէջ , իսկ սա՛մ երկիրներունը խօզակ-  
նին շինած են , աստերն ալ չորցուցած ու խօզակը քելելու վրայ են :





**Ա Ռ Ի Ի Շ**



**Է Ս Է Տ**

### **Յ Ո Ւ Լ Ի Ս**

Աստոյս մէջ պէտք է ծողվիլ նախ չոր խոտերն ու սպա վայրի կաղամբներն ու համբարել . կրնսրված բոյերը ծախել . ցորենը, վարսակը, համարն ու գարին հնձել . հնձրվածները կալին վրայ ձեծեղով յարդեն զատել եւ շեմարանը լեցրնել ու սեպ խառնել որ հովոտին : Պէտք է ընդդէմերը բաղել , արտերը ջրել ու կամ այլ կանաչեղեն՝ կամ Մարացորեն ցանել : Կենդանիքը պէտք է ջուրը խոթել եւ երբեմն վարսակով կերակրել , արու եւ էգ ոչխարները միասեղ բող սալ որ երբան արածվին քրեկներուն կոտրած նիւղերն արմատեն յօտել , որբերուն սկար նիւղերը պէտք է կտրել , արմատի խոտերը կրկին բրբրել ու մօտի խոտերն ալ փրցրնել , պղտասու ծառերուն անպիտան նիւղերն ալ կտրել : Փերակները պէտք է



կրել ու մեղրը մոմէն զատել , բայց պէտք չէ մեղրին ամենն ալ առնել փերակէն , որպէս զի մեղուներն իրենց կերակուրէն գրկրված կարծելով չխրսին եւ ուրիշ յարմար տեղ գտնելով չձգեն բնակարաններն ու չերբան :



Կ Ա Յ Ս



Մ Ի Բ Պ Ի Ի Է

## Օ Գ Ո Ս Տ Ո Ս

Տեղ կայ որ ցորենն ամսոյս մէջ միայն հնձեն , բայց այն երկիրներն որ արդէն հնձրված են , այն արտուս մէջ պէ՛տ է աղբուկիւր ցուել , ու որ Շուլգամ եւայլն ցանելոյ միտ ունիս : Կանեփն ալ (*spuli*) պէ՛տ է հրնձել եւ եթէ ամսոյս վերջերն անձրեւէ՛ պէ՛տ է արտերը սափանել եւ կրկին Կանեփ ցանել , եւ եթէ Սաճառնի կաղաբոյսն ունիս՝ պէ՛տ է սնկել : Որբերուն աւելորդ տերեւներ պէ՛տ է փրցնել որ հաղողներն եփին , զինքին սակառներն ալ հիմակուրնէ պէ՛տ է պատրաստել , ծառոց արմատներուն սակր փոստը շինել , սախսակցու եւ շէնքի ծառերն հիմակուրնէ կտրել : Կովերն ու այլ կենդանիք պէ՛տ է արժաւարտոյն քող սալ որ անտառներու եւ լեռներու մէջ երբան արծիս , որպէսզի սափէն ազատ մնան :



Զմռան համար պէ՛տ էղած ձուերն ամսոյս մէջ պէ՛տ է ծողովել ու սագերուն ալ փետուրը փրցրնել : Պէ՛տ է նաեւ մեղուներուն առաւել հոգ ցանել այժմ բան գուրիւտ ամիս , որ աւերիչ կենդանիք չվնասեն զայնս :



ԿՇԻՌ



ՄԻՋՍՆ

### Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

Ամսոյս մէջ երկրագործին պէ՛տք է քաղել միանգամայն ցանել . քաղածը համբարել ու ցանելի՛ք հունները մաքրել, օտար ու անպիտան հունները զատելէն յետոյ՝ մասնաւորապէս ցորենիներ ծեծել ու անոր համար սահմանեալ արօք պարարեցընել աղբուկիրով՝ որ չհարանայ. անասնոց համար հնձընված խոտերը պէ՛տք է լաւ չորցընել որ չլրխկին : Ամսոյս վերջերը Ե՛տ յընդհանրապէս առաւել պարարտ լինին քան զայլս : Այգեկուրքն ընդհանրապէս ամսոյս մէջն իյնայ, վասն որոյ պէ՛տք է զգուշանալ որ անձրեւը չսկսած սկսիս հաղողները կրել որ չփսին, Եւ երբ նոր ցնկընված որբեր ալ ունիս՝ առուններէ հանած հողդ անոնց արմատք լեցուր



որ զօրանան : Չիտեն ու եզերն սկսէ չորով խառն կերակրել, այսինքն, ձաւարով (*սրուկուր*) խառն խոտերով : Առաւօտուն պէ՛տք է ոչխարաց վարսակ քալ. իսկ կովերը քող տուր որ կանաչեղէն ուտելը Եւրունակէն :



Կ Ա Ր Ի Ճ



Ա Գ Ր Է Պ

### Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր

Ամսոյս մէջ երկրագործին ընելիին է ձմռան պաւարը հոգալ՝ կենդանեաց համար. պէ՛տք է ծառերէ քափած սերունդներ ժողվել ու չոր խոտերուն հետ պահել : Արեւը պէ՛տք է խորաներկել՝ Աւան գարիին ու ցորենին համար . այս ամսոյս մէջ կրնաս Հանար ցանել նաեւ Փարսք սնկել : Պէ՛տք է Տորոնը փետել ու չորցնել , Այգեկոսքի համար զգուշանալ որ պարզ օդին եւ շաղերը չորցած ասեւր լինի : Ճերմակ գինի շինելոյ համար՝ պէ՛տք է հաղողը կրելէն յետոյ՝ իսկոյն նրմուել ու 20 կամ 30 օրէն ֆաշել . իսկ կարմիրին համար՝ պէ՛տք է նախ՝ հաղողին պտուղը ողկոյզէն զատել ու աղէկ մի նրմարվելէն ու դաղարը վազելէն յետոյ՝ փայտաւէն ամսններու մէջ ֆաշել , եւ առաջին եփն առածին պէս



ամանին վրայ լաւ մի գոցել : Պէ՛տք չէ ձիերը բող սալ որ շաղոս խոտերու վրայ առածին . հաւերուն վարսակ պէ՛տք է սալ որ սկսին անել : Փերակաց մշէն կամ առջեւէն աղբերն ու մեռեալները պէ՛տք է մաքրել :



Ա. Դ. Ե. Դ. Ն. Ա. Ի. Ո. Բ.



Գ. Ա. Վ. Ի. Ս.

### Ն Ա Յ Ե Մ Բ Ե Բ

Յանված արտեր պէ՛ս է հսկել որ եթէ ջրոս կամ լնացեալ տեղեր կայ՝ անոնց մօտեն առուներ բանարով ցամփեցընել՝ որ ջրոց չափազանցուրիւնը հունտերը չապականէ : Վերջի ցանվելիքները պէ՛ս է սերմանել ու հերկել նաեւ այն երկիրներն որ զարնան ասեն պիտի հնձըվին . փաքար եւս կրնայ սնկըվիլ այս ամսոյս մէջ : Թրքնաստանը պէ՛ս է աղբոսել եւ փորել ու նոր քրքնիքը սնկել : Որքերուն ցիցերը պէ՛ս է հանել եւ վրայի հողերը մաքրելն յետոյ տեղ մը դիզել որ չիտին ու հետեւեալ տարուան գործածվին . ձիերուն վարակ սալը պէ՛ս է դարբեցընել ու անոր տեղը փոքր առ փոքր ստեպոյին կերցընել : Կովերուն գովերը եւ այլ կենդանեաց ախոռները պէ՛ս է մաքուր եւ հովոս պահել , երբեմն ալ կեն-



դանիքը բակը հանելով պտուսցընել որ օդ առնեն : Պէ՛ս է ոչխարներու չորախառն կերակուր տալ ու օճն ալ մէկ ժամ դուրս հանել որ հովաւիրին : Փեքակները պէ՛ս է հսկել ու պէ՛ս է եղած կերակուրն ալ տալ :



ԱՅԾԵՂՋԻ ԻՐ



ՃԷՏԻ

## ԴԵԿՏԵՄԲԵՐ


Կենդանեաց վրայ մասնաւոր հոգ պէ՛տ է սանել ամսոյս մէջ՝ ու քէ գոմերը, քէ ախոռները եւ քէ հաւնոցները սա՛ր պահել՝ որ չմտին. ոչ-խարներուն բնակարանին մէջ պէ՛տ է ջուր դնել, եւ եթէ ցուրսը սաստիկ է՝ ջուրը քիչ մը սափցրնել; նոյնպէս եւ հաւնոցներուն մէջ՝ որ կենդանի չվնասին: Պէ՛տ է որբերու դաւսաբաղին համար փոսեր պատրաստել եւ եթէ սառեւէ վախ չկայ՝ պէ՛տ է սահմանեալ նիւղերը դաւսաբաղել ու արմատանան. խնձորի եւ սանձի ծառերը պէ՛տ է յօտել եւ պտուղսու ծառերը սնկել. ձիթապտուղը հիմա քաղել որ եղոս ու պարսարս մնան: Աղէկ օղի ասեմ երկրագործը կրնայ առուները մաքրել, յունվարի մէջ պէ՛տ է ըլլալի՛ք փոսերը բանալ, կառոս երկիրները հերկել եւ լնացեալ տե-



ղերուն փոյն առուներ բանալ որ անպիտան եւ վնասակար ջրերը քամվին երբան: Փէրակները պէ՛տ է՝ կամ մաքրել եւ կամ մեղուները նոր շինված փէրակաց մէջ զգուշութեամբ անցնել եւ անոնց դռնակներն ալ զոցել:

ՀԱՅՈՑՅՈՒՊ ԿԳ ԿՈՅՈՒՆ









ՈՒԹԵՐՈՐԴ

Մ Ա Ս

ՀԱՄԱՌՈՑ

ԹՈՒԱԲԱՆ ՈՒԹԻՒՆ

1860

U. S. U.

1860

1860

## ՀԱՄԱՌՕՏ

## ԹՈՒԱԲ ԱՆՈՒԹԻՒՆ



1. Հաշիւ ընելոյ կանոնաւոր ուսման համար՝ ինը բուանճան եւ մէկ գրօ կայ, որք միաւոր անուանին, եւ այս միաւորաց աչ կողմը երէ գրօ մի աւելնայ՝ *սասնաւոր*, երկու գրօ՝ *հարիւրաւոր*, եւ այսպէս հետզհետէ գրօնէր աւելնալով թիւերը լինին աննուն, այսինքն, անվերջ:

## Միաւոր թիւք

1	2	5	4	5	6	7	8	9	0
---	---	---	---	---	---	---	---	---	---

## Տասնաւոր թիւք

10	20	50	40	50	60	70	80	90
----	----	----	----	----	----	----	----	----

## Հարիւրաւոր թիւք

100	200	500	400	500	600	700	800	900
-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----

2. Ինչպէս խօսուի՝ նոյնպէս եւ գրուրեամբ, ամբողջ գումարին մեծը պէտք է նախ դնել, յետոյ անկէ վոքրը (մեծ բուոյն աչ կողմը զնելով) հետզհետէ նճանակել մինչ ի միաւոր թիւն: Այսպէս. *սասնը վեց*, 16. *հարիւր* *սասնը վեց*, 126. *ինը հարիւր ութսունը չորս*, 984. *երեք հարիւր եօթը*, 307:

Բ Ա Ղ Կ Ա Յ Ե Ա Լ Թ Ի Ի

321,864,392,

Հինգ հարիւր *սասնը* մէկ միլիօն ութ հարիւր վաթսունը չորս հազար երեք հարիւր ինըսուն երկու .

3. Սոքա որ միաւորեք, *սասնաւորեք* եւ *հարիւրաւորեք* բաղկացեալ գումարք են, իրենց Էն վոքրը միաւոր լինելուն համար՝ *կարգ միաւորի* անուանին, եւ երէ ասոնց վրան, աչ կողմէն դէպ ի ձախդ, ուրիշ երեք գրօներով կամ թիւերով գումար մի եւս աւելնայ՝ *կարգ հազարաւորի*, նոյնպէս եւ երորդ մի, *կարգ միլիօնաւորի*: Անոր համար որ ձախ

կողմից առաջին կարգը իբրև *միլիոն*, երկրորդը իբրև *հազար* եւ երրորդը իբրև *հարիւր* նշանակեն, թէ խօսիլ եւ թէ գրուեան մէջ : Օրինակ,

<i>կարգ</i> <i>միլիոնաւորի</i>			<i>կարգ</i> <i>հազարաւորի</i>			<i>կարգ</i> <i>միաւորի</i>		
<i>հարիւրաւոր</i>	<i>սասնաւոր</i>	<i>միաւոր</i>	<i>հարիւրաւոր</i>	<i>սասնաւոր</i>	<i>միաւոր</i>	<i>հարիւրաւոր</i>	<i>սասնաւոր</i>	<i>միաւոր</i>
5	2	1	8	6	4	5	9	2

4. Միայն 1 բուննշանով եւ զրօնեով բաղկացեալ զումարներն են եւ կամ թիւերն՝ որ **հաւաքածոյ միութիւն** անուանին: Զոր օրինակ ,

10,            100,            1000,            10000,

5. *Միաւոր*, *սասնաւոր*, եւայլն, բաղադրեալ թիւերը հաշիւի սակաւնելոյ համար՝ չորս հիմնաւոր գործողութիւն կայ : Որ ասոնք են , **Յաւելում**, **Բարձում**, **Բազմապատկութիւն**, **Բաժանում** :

## Ա. ՅԱՒԵԼՈՒՄ

6. *Յաւելում* ասեն այն գործողութեան, որ ինչ եւ իցէ թիւ կամ համբանք իբարու վրայ աւելցրնելով՝ անոնց երկուքը, երեքը, չորսը եւայլն, հաւաքէ ի մի զումար. եւ այն հաւաքելիք՝ *զումարելիք* անուանին, իսկ այն որ զուրիցներն հաւաքէ՝ *զումար* անուանի :

7. Այս գործողութիւնն քննելոյ համար՝ պէ՛տ է *զումարելիքն* իբարու սակ գրել զաւազանաձեւ, այսինքն *միաւորը* միաւորին սակ, *սասնաւորը* սասնաւորին եւ *հարիւրաւորը* հարիւրաւորին սակ, եւ այլն, այսպէս բոլոր զումարելեաց սակէն հօրիզօնաձեւ գիծ մի հաշել : Զոր օրինակ,

<i>զումարելիք</i>	2343	4525	<i>զումարելիք</i>
«	902	1286	«
«	14	569	«
«	1008	3670	«
«	487	625	«
<i>զումար</i>	4756	40271	<i>զումար</i>

Զորս պէ՛տ է նոյնպէս զումարել. այսինքն, նախ՝ *միաւոր* թիւերն իբարու վրայ աւելցրնելով՝ նշանակել (նոյն իսկ միաւորաց զաւազանին սակը)

միաւոր քիւր , եւ եթէ միաւորաց գաւազանին վրայէն *սասնաւոր* քիւ մի աւելնայ , *սասնաւորաց* գաւազանին վրան աւելցրնել եւ անկէց ելածը նոյն սիւնին *սակը* դնելով մնացածը ձախ կողմի երրորդ գաւազանին (*հարխաւորաց*) վրան աւելցնել եւ շարունակել , այսպէս . *Եօրը , ուրն ալ՝ սասնը հիկզ* , — *չորս ալ՝ սասն իկը* , — *երկուս ալ՝ ֆասնը մկ* , — *հիկզ ալ՝ ֆասնը վկց* . պէ՛տ է ճը *միաւորաց* սիւնին *սակը* դնել եւ Չը *սասնաւորաց* սիւնին պահելով՝ *ասել* , *երկուս առ ձեռք* , եւ (սասնաւորին վրան աւելցրնելով՝ *ասել* , *ուրն ալ՝ սասն* , — *մկ ալ՝ սասնը մկ* , — *չորս ալ՝ սասնը հիկզ* — . եւ այսպէս շարունակել մինչեւ վերջի սիւնը :

**8.** Գումարելիները մէկ տղի մէջ եւս կրնան գրվիլ այս (+) *աւելի* նշանաւ՝ որ գումարելեաց մէջ տեղը դրվելով զայնս իրարու վրայ աւելցրնէ . նոյնպէս եւ այս (=) *հաւասար* նշանաւ՝ որ գումարը գումարելիներէն զատէ : Այսպէս , 1225 , *աւելի* 108 , *աւելի* 19 , *հաւասար* 1350 :

$$1225 + 108 + 19 = 1350$$

## Բ. Բ Ա Ր Չ Ո Ւ Մ

**9.** *Բարձուս*՝ ասեն այն գործողութեան՝ որ ինչ եւ իցէ փոքր գումարն իրմէ մեծ գումարէն հանելով՝ անոր աւելցածը կամ *սարբերութիւնը* յայտ առնէ . եւ այս առաջին գումարն անուանի *մեծ քիւ* , անկէ հանվելիքը *փոքր քիւ* , եւ այս երկու գումարաց *սարբերութիւնն* ալ *մնացորդ* :

**10.** Այս գործողութիւնն ընելոյ համար պէ՛տ է նախ *մեծ քիւ*ը դնել , *փոքրն* անոր *սակը* , եւ յետոյ գիծ մի ֆաշելով՝ սկսիլ աջ կողմէն փոքրոյն միաւորը մեծիկէն հանել՝ եւ աւելցածը նոյն իսկ միաւոր սիւնին *սակը* նշանակել , եւ նոյնպէս շարունակել մնացած միութիւնները , իւրաքանչիւր սիւնին *սարբերութիւնը* հիշք իր սիւնին *սակը* գրելով : Այսպէս ,

<i>մեծ քիւ</i>	2838	64752	279847
<i>փոքր քիւ</i>	1723	41222	162243
<i>մնացորդ</i>	1155	23510	117632

**11.** Իսկ եթէ *փոքր* բն ոյն մէկ տեսակը *մեծիկն* իր նման տեսակէն աւելի մեծ լինի , պէ՛տ է *մեծ* բնոյն ձախ կողմի տեսակէն 1 առնել ու 10 աւելցրնելով *փոքր* բնոյն մեծ տեսակն անկէց հանել . եւ եթէ պակաս տեսակին ձախ կողմինը զրօ կամ զրօներ լինին՝ անոնց ձախ կողմի նշանաւոր քիւէն 1 առնելով անոր աջնոյն եւ անկէ միւսոյն ու վերջապէս մինչեւ

մեծ բուռն պակասած տեսակին բերել . որով զգոներուն էտեի նշանաւոր քիւէն մէկ պակասի, զգոներն ալ 9 լինին եւ բուն պակասած տեսակին վրան ալ տասն աւելնայ : Զոր օրինակ ,

450087

264390

---

183697

800008

95729

---

704279

**12.** Այս գործողութիւնը մեծ եւ *փոքր* քիւերուն մէջ (—) *պակաս*, նոյնպէս եւ *փոքրոյն* ու *մնացորդին* մէջ (==) *հաւասար* նշաններ դնելով եւս կրնայ գրվիլ՝ մէկ տողի մէջ, որ առաջինը պակասեցրնելայ եւ երկրորդը հաւասարելայ համար դրված են : Ինչպէս ,

$$450087 - 264390 = 183697$$

**13.** Բարձման ուղութիւնը փորձելոյ համար պէտք է, նախ՝ *մնացորդը* գումարել *փոքր* բուռն հետ, եւ ետէ մեծ բուռն հետ հաւասարի ուղիղ է : — Երկրորդ՝ պէտք է *մնացորդը* հանել մեծ քիւէն, եւ ետէ ստոր *մնացորդը* եւս *փոքր* բուռն հետ հաւասարի՝ նոյնպէս ուղիղ է :

## Գ. ԲԱԶՄԱ ՊԱՏԿՈՒԹԻՒՆ

**14.** *Քազմապատկոյթի*ն ասեն այն գործողութեան, որ ինչ եւ իցէ քիւ՝ իւր ամէն մէկ միութեամբն ուրիշ քիւերը կրկնապատկելով բազմացրնէ . եւ այս գործողութեան մէջ կրկնվելիքն անուանի *քազմապատկելի*, կրկնողը *քազմապատկող* եւ բազմացածն ալ *արտադրեալ* : Այսինքն, 3 ոսկի 3 ական ճռանէն ընդամենը բանի ճռանք ընելն իմանալոյ համար՝ 3 անգամ 9 ին կամ 9 անգամ 3 ին անբողջ գումարը վերածելով զսանի 45 : Հաս 9ը *քազմապատկելին* է, 5ը *քազմապատկող* եւ 45ը *արտադրեալ* :

**15.** Պարզ բուռն *արտադրեալը Պիւրագործան Աղիւսակէն* պէտք է սովրիլ, որ այսպէս շինվի . Միաւորաց ինն ալ մէկ տողի մէջ կարգաւ նշանակելէն յետոյ՝ պէտք է նոյն իսկ տողին տակը երկրորդ տող մի եւս, նշանակել՝ առաջնոյն ամէն մէկ քիւր կրկնապատկելով : Երրորդ մի եւս՝ երկրորդ եւ առաջին տողերն՝ իբարու վրայ աւելցրնելով : Զորրորդ մի եւս երրորդին եւ առաջնոյն գումարն ընելով, եւ այսպէս մինչեւ իններորդ տողն, որ ութերորդին եւ առաջնոյն գումարն է : Այս կերպիւ

ամեն մէկ տղին առաջին միաւորները բազմապատկող, առաջին տղի ամեն մէկ միաւոր բիւերը բազմապատկելի, եւ բազմապատկելի բիւերուն սիննի գումարը, (որ բազմապատկող բիւերու տղին վրայ նշանակած են) *արտադրեալ* անուանին : Օրինակի աղագաւ . Եր 7 ին հետ բազմապատկելով 7 ին արտադրեալը 6 ին շիտակութեամբ 42 պիտի գտնես, որ առաջին տղի 7 ին սեան մէջ է : Եւ անաւասիկ օրինակը,

**Պ Ի Թ Ա Գ Ո Ր Ե Ա Ն Ա Ղ Ի Ս Ա Կ**

1	2	3	4	5	6	7	8	9
2	4	6	8	10	12	14	16	18
3	6	9	12	15	18	21	24	27
4	8	12	16	20	24	28	32	36
5	10	15	20	25	30	35	40	45
6	12	18	24	30	36	42	48	54
7	14	21	28	35	42	49	56	63
8	16	24	32	40	48	56	64	72
9	18	27	36	45	54	63	72	81

*Բազմապատկողին միաւորը բազմապատկելի բաղադրեալ բիւերու միաւորին տակը դնելով՝ անոնց ամեն մէկ տեսակը պէտք է բազմապատկել:*

*Գործողութիւն*

4567	<i>բազմապատկելի</i>	<i>բազմապատկելի</i>	863527
7	<i>բազմապատկող</i>	<i>բազմապատկող</i>	8
<u>31969</u>	<i>արտադրեալ</i>	<i>արտադրեալ</i>	<u>6908216</u>

**16.** *Բազմապատկողն ու բազմապատկելին եք բաղադրեալ բիւեր*

լինին փոքր թիւը մեծ բուռն իր սեփականութեան սակը պէ՛տք է միշտ դնել, եւ յետոյ աչ կողմէն սկսելով բազմապատկողին ամէն մէկ տեսակովը բազմապատկել. յորմէ ելած տող առ տող գումարներն անուանին *մասնաւոր արտադրեալք*. Եւ ասոց գումարը լինի *ընդհանուր արտադրեալք*. Իսկ միշտ ուշադրութիւն պէ՛տք է ընել որ մասնաւոր արտադրեալներուն առաջին բուռնեանը բազմապատկողին իր տեսակովը կամ իր տեսակին սեփականովը գրվի: Զոր օրինակ,

	<i>բազմապատկելի</i>	564	283	314
	<i>բազմապատկող</i>	428	233	122
<i>Ա. մասնաւոր արտադրեալ</i>		4312	833	628
<i>Բ. " "</i>		4128	4423	628
<i>Գ. " "</i>		564	570	314
<i>ընդհանուր " "</i>		72192	72103	58308

**17.** Բազմապատկելին եթէ մէկ բուռնեան՝ ու մէկ, երկու, երեք եւ այլն զօրներով բաղկացեալ բազմապատկող որ ունենայ, ինչպէս 20, 100, 900. բազմապատկողին նշանաւոր թիւը բազմապատկելոյն միաւոր թիւին սակը դնելով՝ սկսելու է անո՛վ միայն բազմապատկել եւ զօրներն ալ ընդհանուր արտադրեալին աչ կողմն աւելցնել: Այսպէս,

568	824	789
400	80	900
56800	65920	710100

Այս մասին մէջ միմիայն 4 բուռնեանով եւ զօրներով բազմապատկող գումարներն են որ՝ իրենց զօրները բազմապատկելոյն աչ կողմն աւելցրնելով՝ արտադրեալ լինին, կամ արտադրեալին հաւասար: Օրինակի աղագաւ, 432ը 10 ով բազմապատկելոյ համար՝ 10 ին զօրն 432 ին աչ կողմը դնելով՝ 4320 արտադրի. եւ եթէ 400 ով հարկաւորի բազմապատկել՝ հարիւրին երկու զօրն 432 ին աչ կողմը դնելով՝ արտադրեալը լինի 43200:

## Գ. ԲԱԺԱՆՈՒՄ

**18.** *Բաժանում* ասեն այն գործողութեան, որ ինչ եւ իցէ թիւ՝ իր ունեցած ամէն մէկ միութեանը հաւասար կտրուներ արտադրէ այլ թիւերէ, եւ կամ այլոց մէջ՝ իր ամբողջութեանը հաւասարը՝ քանի՜ անգամ պարունակելն յայտ առնէ. եւ այս վերջինը բազմապատկութեամբ արտադրվելուն համար՝ *բաժանում* անուանեալ գործողութեան իսկ անդ-





ձեալ (իբրեւ սասնաւոր) բաժանելոյն քովի տեսակին տալով՝ պէ՛տ է Եւրոնակել զործողութիւնը, մինչեւ որ բաժանելոյն տեսակները հասնին: Եւ եթէ բաժանողը բաժանելոյն նր եւ իցէ տեսակին մէջ չը պարունակի՝ քանորդին մէջ զո. պէ՛տ է՝ դնել: Օրինակ,

$$\begin{array}{cccc} 7, 129969 & 8, 118288 & 6, 207402 & 6, 2043402 \\ 18367 & 14786 & 54367 & 540367 \end{array}$$

Այս զործողութիւնը լինի նաեւ՝ (-) բաժանող նշանէ մը ետքը բաժանողը, եւ (==) հաւասար նշանէ մը ետքը քանորդը գրելով. նոյնպէս եւ երբեմն կոտորակի ձեւով: Զոր օրինակ,

$$94366 \div 6 = 15727 \qquad \frac{319071748}{4} = 79767937$$

**22.** Որ եւ իցէ թիւ հաւասար միտքաւոր բաժանելոյ համար՝ բաժանողին զօրծրուն համարանիս չափ զո կամ բուանեան՝ բաժանելիէն զատելով պէ՛տ է զործողութիւնն ընել: Այսպէս,

$$5430 \div 10 = 543 \qquad 54700 \div 100 = 547 \qquad 58620 \div 100 = 586,20$$

**23.** Բաժանողն ու բաժանելին, երկուքն ալ եթէ բաղադրեալ թիւեր լինին, այն ստեն բաժանողը գրելու է բաժանելոյն աջ կողմը ուղիւ հայեաց զձէ մը ետքը, բաժանողին տակէն հորիզօնական զի՞ծ մը քաշելու է որ անոր տակէն ալ քանորդը գրվի: Բաժանելոյն ձախ կողմէն բաժանողին չափ բուանեան՝ կամ թէ որ ստոնց մէջ բաժանողը չպարունակի՝ մէկ բուանեան աւելի զատելու է, որ լինի առաջին մասնաւոր քաժանելի: Առաջին մասնաւոր բաժանելոյն մէջ նայելու է՝ թէ բաժանողը քանի անգամ պիտի պարունակի. յորմէ ելածը առաջին մասնաւոր քանորդը պիտի լինի, որով բաժանողին արտադրեալը Ա. մասնաւոր բաժանելիէն հանելու է եւ առաջին մասնաւոր բաժանելոյն յաջորդ բուանեանը մնացորդին քովն իջեցրնելու է՝ որ լինի երկրորդ մասնաւոր քաժանելի:

Երկրորդ մասնաւոր քաժանելոյն մէջ ալ բաժանողը նայելու է՝ թէ քանի անգամ պիտի պարունակի, յորմէ ելածն երկրորդ մասնաւոր քանորդը պիտի լինի, որ (առաջին մասնաւոր քանորդին աջ կողմը գրելով) նոյնով բաժանողին արտադրեալը երկրորդ մասնաւոր բաժանելիէն հանելու է, եւ երկրորդ մասնաւոր բաժանելոյն յաջորդ բուանեանը մնացորդին քով իջեցրնելու է, որ լինի երրորդ մասնաւոր քաժանելի. որուն

մէջ բաժանողը դարձեալ նայելու է եւ շարունակելու է գործողութիւնը՝ մինչեւ որ բաժանելոյն ամէն բուանեաններն հասնին. իսկ եթէ վերջը բաց մի մնայ, այն ալ բոլոր բաժանման մնացորդն է :

**24.** Միտս ոյժ գնելու է որ մասնաւոր քանորդները 9 անգամէն աւելի չպարունակին, վասն զի քէ որ 10 անգամ պարունակին, այն ասեմն *մասնաւոր բաժանելոյն* աչ կողմի մէկ բուանեանը դուրս ձգելով՝ մնացածին մէջ գոնէ մէկ անգամ պարունակելու է :

**25.** Մասնաւոր քանորդները դիւրութեամբ գտնելու համար՝ պէժ է նայիլ քէ բաժանողին մեծ տեսակը մասնաւոր բաժանելոյն իր նման տեսակին մէջ քանի անգամ որ պարունակի՝ մնացած տեսակներն ալ բաժանելոյն իրենց նման տեսակներուն մէջ այնքան պիտի պարունակին. քէ որ չպարունակին՝ պէժ է քանորդը մէյմէկ պակտեցնելով փորձել՝ մինչեւ որ բաժանողին ամէն տեսակներն ալ մասնաւոր բաժանելոյն իրենց նման տեսակներուն մէջ հաւասարապէս պարունակին :

*Ձոր օրինակ*, — 489ը 3912 ին մէջ քանի անգամ պարունակիլը գիտնալու համար՝ ասեմն . 4ը 39 ին մէջ 9 անգամ պարունակի՝ եւ 3 աւելնայ, քայց 8ը 31 ին մէջ 9 անգամ չկայ, ուրեմն քտեմն 4ը 39 ին մէջ 8 անգամ կայ եւ 7 աւելնայ, եւ 8 ալ 71 ին մէջ 8 անգամ պարունակի 7 աւելնայ, ուրեմն 9 ալ 72 ին մէջ 8 անգամ պարունակի. ուստի քանորդինս է 8 եւ 489ը 3912 ին մէջ 8 անգամ կայ եւ քան չաւելնար :

### ՕՐԻՆԱԿ

*ընդհանուր բաժանելի*

Ա. մասնաւոր բաժանելի	29717,080	8364	.....	քաժանող
	25692	3470	.....	քանող
Բ. « «	40250			
	54256			
Գ. « «	59948			
	59948			
	0			

Վեի գործողութեան մէջ, *քաժանողը՝ Ա. մասնաւոր բաժանելոյն* չորս բուանեանաց մէջ չպարունակելուն համար՝ ընդհանուր քաժանելիէն ուրիշ բուանեան մի եւս զատեցիմն ու այնպէս քրինք գործողութիւնը:



ԱՄԲՈՋ ՔՈՒՈՑ

## ԶՈՐՄ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՅ ՎՐԱՅ

Խ Ն Գ Ի Բ Ն Ե Բ

1. Գարոցի մը մէջ չորս կարգ աւակերս կայ. որոց առաջին կարգը բաղկանայ 24 աւակերսէ, երկրորդը 18 աւակերսէ, երրորդը 22 աւակերսէ, չորրորդը 15 աւակերսէ : Գարոցին աւակերսաց ամբողջ թիւը քանի է :

Պատ. **79** աշակերս.

2. Մեծասուն մը 4 ալբաշի սսակ տուաւ, առաջինին 2180 դուռուօ, երկրորդին 1975 դուռուօ, երրորդին 1700 դուռուօ, եւ չորրորդին տուաւ 1705 դուռուօ : Բոլորին տուած զումարը քանի դուռուօ է :

Պատ. **7560** դուռուօ.

5. Վանառական մը երեք հոգիէ 17845 դուռուօ առնելիք ունէր. նոյն վանառականը պարսէ ունէր 15727 դուռուօ: Վանառականը իւր պարսէը վնարելէն վերջը դեռ քանի դուռուօ պիտի ունենայ :

Պատ. **2116** դուռուօ.

4. Շոգեկամք մը երբոր մէկ ժամուն մէջ 35 մղոն հանապարհ ընէ, 57 ժամու մէջ քանի մղոն հանապարհ կրնայ ընել :


Պատ. **1295** մղոն.

5. Գարոցի մը սարեկան եկամուսն է 55750 ժրանք, եւ երբ մէկ աւակերսին համար սարին 650 ժրանք ծախս ըլլայ, քանի աւակերս կրնան ուսմունք սովորիլ նոյն դպրոցին մէջ :


Պատ. **55** աշակերս.

6. Հայր մը իւր ունեցած 180600 դուռուօ ժառանգութիւնը իւր եօթը որդոցը բաժանեց, բայց անդրանիկին 7000 դուռուօ աւելի տուաւ : Իւր որդոց ամէն մէկը քանի կանխկան դուռուօ ժառանգեցին :

Պատ. **24800** դուռուօ.







## ՀԱՄԱՌՕՏ

## ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ



1. Երաժշտութեան մէջ Եօրր *ձայնակիշ* (notes) կայ, զորս հիները խազ եւս անուանած են, եւ այս *ձայնակիշներուն* անուններն են:

*so, rk, մի, ֆա, սօլ, շա, սի.*

2. *Ձայնակիշ* հինգ զծի վրայ գրված են, եւ այս զծերուն անունն է *Հնգայն* (portée), որոց սակիցն է Առաջին' եւ վերինն է Հինգերորդ:

3. *Սօլի* դուռն երկրորդ զծին վրայ դրված է, եւ նայն զծին վրայի *ձայնակիշ* անունն ալ *սօլ* է:

## ՕՐԻՆԱԿ

Հնգայն

Դուռն սօլի



Սօլ

Ե.    :  
 Գ.    :  
 Բ.    :  
 Ա.    :  
 Ս. զիծ

Այս *հնգայնի* (portée) վրայ երեք *դուռն* (clefs) կան. *ֆաի* դուռն  *սօի* դուռն  եւ *սօլի* դուռն : Այս դուռներէն ասէպ զորձածվածն է *սօլի*նն ու *ֆաի*նը. իսկ *սօի* դուռն զորձածութիւնը խիստ նուազ է, եւ որ *ձայնակիշ* երաժշտութեան մէջ երբէք չգործածվիր:

4. *Ձայնակիշները* թէ զծերու վրայ եւ թէ զծերու մէջեղը դրուած են:

Հնգայնի գծերուն վրայ դրուածներն են՝ մի, սոլ, սի, ռե, ֆա. Եւ հնգայնի գծերուն մէջտեղը դրուածներն են՝ ֆա, լա, սօ, մի: Այս ոմը լաւ ըմբռնելու համար պէտք է ձեռնդ հնգայն սեպել, մասերդ հնգայնիս գծերը՝ եւ մասերուդ մէջտեղերն ալ հնգայնի գծերուն մէջտեղերը:

### ՕՐԻՆԱԿ



5. Որովհետեւ շատ անգամ աւելի բարձր կամ ցած ձայներու համար հնգայնիս գծերը բաւական չեն՝ որ երաժշտութեան մէջի զտնուած ամեն ձայները վրանիս կրեն. ուստի բարձր ձայնակներուն համար պէտք է հնգայնիս վրայ մանր գծանիւթ աւելցրնել, ու անոնց վրայ նշանակել բարձր ձայները. նոյնպէս եւ ցած ձայներուն համար ալ հնգայնիս սակի կողմէն նոյն գծերն աւելցրնել:

### ՕՐԻՆԱԿ





6. Երաժշտութեան մէջ *ardhef* (valeur) ըսվածն այն է, որ *ձայնա-  
նշից* վրայ որչափ կեցվիլն իմացրնէ, և *արժեքներն* ալ վեց տեսակ են .  
*Քոչոր, ձերմակ, Սև, Կոր, Կրկոր, Եոկոր.*



7. Երբոր ֆոլէ ֆոլ' *կոր, կրկոր* և *եոկոր* գտնվիլն, փոխանակ  
այսպէս գրելու,



Այսպէս գրելու է.



8. Ինչպէս որ *ձայնանշներուն* վրայ կենալու՝ նոյնպէս ալ լռելու  
համար նշաններ կան: *Քոչորի* լռելու համեմատ նշանն է *Դադար*.  
*ներմակի*նը *Կեսդադար*. սեւի՛նը *Շնչակ*, կորի՛նը *Կեսշնչակ*, կրկորի՛նը  
*Քառշնչակ*, և եոկորի՛նը *Կեսքառշնչակ*:

### ՕՐԻՆԱԿ



Դիտելու է որ *դադարը* զծի՛ն սակը դրված է և *կեսդադարը* զծի՛ն վրայ:

9. *Քոչորն* արժէ չորս ժամանակ: — *ձերմակն* արժէ երկու ժամանակ:  
*Սևն* արժէ մէկ ժամանակ: — *Կորն* արժէ կէս ժամանակ, (որով երկու  
*կոր* պէ՛տ է, մէկ ժամանակի համար): — *Կրկորն* արժէ քառորդ ժամա-  
նակ (որով չորս *կրկոր* պէ՛տ է մէկ ժամանակի համար): — *Եոկորն* արժէ  
կէսառ. ժամանակ, (որով ութ *եոկոր* պէ՛տ է մէկ ժամանակի համար):

## Յ Ո Ւ Յ Ա Ն Ա Մ Ա Ր Ք Ի Յ

Բարձրն արժէ

Բարձրն արժէ

2 ձերձակ

2 ձերձակ

Կամ 4 Սեւ

ձերձակն արժէ

2 Սեւ

Սեւն արժէ

Կամ 3 Կր

2 Կր

Կրն արժէ

Կամ 16 Կրկր


2 Կրկր

Կրկրն արժէ

Կամ

52 Երկր

2 Երկր



**10.** Որ եւ իցէ եղանակ՝ հաւասար մասերու բաժնւով Եւ հնկայ-  
նին վրայ ուղագծով մի նշանակված են :

**11.** Երաճեսութեան մէջ վեց տեսակ չափ կան, որոց աւելի գործածա-  
կանն են հետեւեալ երեքը :

Ա. Քառահարֆ չափ, որ այսպէս **C** նշանակված է:

Բ. Եռահարֆ չափ, որ **3** կամ  $\frac{3}{4}$  ով նշանակված է:

Գ. Երկահարֆ չափ, որ նշանակված է  $\frac{2}{4}$  ով՝ կամ այս նշանով **C**  
Քառահարֆ չափն այսպէս պէտք է զարնել.


Առաջին հարֆը դէպ ի վար, Երկրորդը դէպ ի ձախ կողմը, Երրորդը  
աջ կողմը, Չորրորդն ալ դէպ ի վեր :

Եռահարֆը այսպէս.

Առաջինը դէպ ի վար, Երկրորդը աջ կողմը Եւ Երրորդը դէպ ի վեր :

Երկահարֆը այսպէս.

Առաջին հարֆը դէպ ի վար Եւ Երկրորդը դէպ ի վեր :



**12.** Երբոր *ձայնանշի* մը բով կէտ դրվի, *ձայնանշին* արժէք իր  
ունեցածէն կէտ մըն ալ աւելի է: Այսինն, կէտով *Բոչորը*՝ Երեք *ձե-  
մակի* արժէք ունի, նոյնպէս *ձերեակն* Երեք *սեռի* արժէք ունի. — *Սեռն*  
Երեք *կորի*. — *Կորն* Երեք *կրկորի*. — *Կրկորն* Երեք *տկորի* արժէք ունի:

### ՕՐԻՆԱԿ



Նմանապէս կէտր՝ լռելու նշանաց վրայ դնելու եւս սովորութիւն կայ:

**13.** Երաժշտութեան մէջ երբեմն երեք *ձայնակնչի* բաղկացեալ խումբ մի կայ, *երրեակ* (triolets) անուն. որոյ վրայ **3** բուսնեան մի դրուած է. այս երբեակն իրեն ճեսակին՝ երկու *ձայնակնչաց* արժէքն ունի: Նոյնպէս եւ վեց *ձայնակնչի* բաղկացեալ *վեցեակ* անուն խումբն՝ իր վրան **6** բուսնեանով, իր ճեսակին չորս *ձայնակնչաց* արժէքն ունի:

### ՕՐԻՆՍԿ



**14.** Չայները եօթ աստիճան են, եւ այս եօթ աստիճան ձայներուն վրայ՝ առաջին ձայնը, այսինքն *sol*՝ վերջէն ալ իբր ութերորդ կրկնրվելով՝ *քշէրը* (gamme) կազմեն, եւ այս *քշէրին* մէջ հինգ *դաւ* (ton) եւ երկու *կեսդաւ* (demi-ton) կայ:

### ՕՐԻՆՍԿ

#### Աստիճանի եւ դաւի ձայնից



**15.** Պէտք է լաւ դիտել, որ առաջին *կեսդաւը*՝ երրորդ աստիճանէն չորրորդին՝ եւ երկրորդ *կեսդաւը* եօթերորդ աստիճանէն ութերորդին մէջ տեղերը դրուած են, եւ այս դրութեամբ, ո՛ր ձայնով որ ուզեմք՝ կարող եմք երաժշտական ձայնից *քշէրը* կազմել:

**16.** *Կիւպիւր* (dièze) նշանն է այս ♯, որ *ձայնակնչի* մը բով դրվելով նոյն *ձայնակնչի* կէս ձայն բարձրացրնելու զօրութիւնն ունի: Ասանկ ալ *կիւպիւր* (bémol) նշանը ♭, որ *ձայնակնչի* մը բով դրվելով նոյն *ձայնակնչի* կէս ձայն վար իջեցրնելու զօրութիւնն ունի: Իսկ *բնիկ* (bécarre) անուն նշանը ♮, *ձայնակնչի* մը բով դրված է՝ *կիւ-*

վար կամ կիսվեր՝ ձայներու վրայ հիմնըված երգերուն մէջ՝ հարկ եղած ասեցինք բնական ձայնը սալու համար :

**17.** Երաժշտական ձայնից *եջևը*՝ սօլ ձայնանւնէն սկսել հարկ եղած ասեցնր՝ պէտք է դիտել որ *եջևիկն* առաջին ասիւնանէն երկրորդը, անկէց ալ երրորդն ելնելու համար՝ մէյմէկ ամբողջ *դաւեր* պէտք են. ուստի սօլէն յետոյ պէտք է յա գործածել, յսկէն յետոյ սի. որ մէյմէկ ամբողջ *դաւ* լինին. եւ որովհետեւ *եջևիկն* երրորդ ասիւնանէն չորրորդն ելնելու *կեսդաւ* մի պէտք է. եւ սիէն յետոյ եկածն ալ *սօ* է, հարկ է զայն գործածել եւ *եջևիկն* երրորդ ասիւնանէն չորրորդն ելնելով *կեսդաւն* լրացնել եւ շարունակել դարձեալ *սօկն* ի *րէ* եւ *րէկն* ի *մի* : Վասնզի չորրորդ ասիւնանէն հինգերորդին, նմանապէս հինգերորդ ասիւնանէն վեցերորդին մէյմէկ *դաւ* պէտք է : եւ որովհետեւ վեցերորդ ասիւնանէն եօթերորդն ելնելու համար ալ ամբողջ *դաւ* մը պէտք է, եւ *միէն* ի *ֆա կեսդաւ* է, ուստի փոխանակ բնիկ *ֆա* գործածելու՝ *ֆաիկն* վրայ *կիսվեր* մի դնելով՝ *կիսվեր ֆա* պէտք է գործածել, եւ *եջևիկն* կանոնէն չբողելով *կիսվեր ֆա* կէն յետոյ բնիկ սօլը գործածել. որ եօթերորդէն ութերորդ ասիւնանէն ալ՝ ըստ կանոնի *եջևիկն*՝ *կեսդաւ* լինի եւ *եջևը* լրանայ : Ըսել է թէ Երաժշտութեան ձայնից *եջևը* սօլով սկսված ասեցնր՝ պէտք է որ *ֆա* ձայնանիւր միտ *կիսվեր* ըլլայ. եւ այն ասեցնր՝ *կիսվեր* նշանը փոխանակ ձայնանւնին վրայ դրվելու՝ սովորութիւն եղած է դրան հովր՝ *ֆա* ձայնանւնի գծին վրայ դնել :

### ՕՐԻՆԱԿ

Ս. Ը. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. կամ Ա.



**18.** Նոյնպէս *եջևը*՝ *ֆա* ձայնանւնէն սկսած ասեցնիս՝ գիտեմք թէ առաջին ասիւնանէն երկրորդը եւ անկէց երրորդը՝ մէյմէկ ամբողջ *դաւեր* պէտք են. ուստի *ֆա*, սօլ եւ յա գործածելէն յետոյ, սի ձայնանւնին վրայ *կիսվար* մի դնելով՝ երրորդէն չորրորդ *կեսդաւն*՝ պարտմք ըստ կանոնի լրացնել. եւ այսպէս *սօ*, *րէ*, եւ մինչեւ ի *մի* եօթերորդն ելնելէն յետոյ՝ եօթերորդէն ութերորդ *կեսդաւն* ալ *ֆա*ով վերջացնել : Ըսել է թէ *ֆա*ով

սկսված *եջևը սի կիսվարով* է, և այս *կիսվար* նշանն ալ (*սօլով* սկսված *եջևիկն* ոնով) *դրան* ֆովը նշանակլու է :

## ՕՐԻՆԱԿ

Ա. սոս. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. կամ Ա.

դամ դամ Եեսգամ դամ դամ դամ կեսգամ

**19.** *Կիսվերները* վարեն դէպ ի վեր հինգ ձայնանշէ առ հինգ ձայնանիւ՝ դրանց ֆով դրված են. այսինքն, առաջինը *Փա* ձայնանիւն ըլլալով, երկրորդը *սօիկն* վրայ պիտի դրվի, երրորդն ալ *սօլիկն*, և այլն :

## ՕՐԻՆԱԿ

Ա. կիսվեր Բ. Գ. Դ. Ե. Զ. Է.

Քա so սօլ րէ լա մի սի

**20.** *Կիսվարներն* ալ վերեն ի վար հինգ ձայնանշէ առ հինգ ձայնանիւ դրված են, դրանց ֆով. այսինքն, առաջինը *սի* ձայնանիւն ըլլալով, երկրորդը *միիկն* վրայ պիտի դրվի, երրորդն ալ *լաիկն*, և այլն :

## ՕՐԻՆԱԿ

Ա. կիսվար Բ. Գ. Դ. Ե. Զ. Է.

սի մի լա րէ սօլ so Քա

**21.** Երաժշտութեան մէջ երկու տեսակ *դամ* կայ. *սոռոյց* (ton majeur), և *րոյլ* (ton mineur). զորս մէկզմէկէ տարբերոլն է կիսաձայնից դիրքը, և անաւասիկ ինչպէս :

**22.** *Սոռոյց դամիկն* *եջևիկն* մէջ՝ *առաջին կեսգամը* դրված է՝ *երրորդ*

ասիճանեկն ի չորրորդ, եւ Երկրորդ կեսդաւը՝ եօթերորդէն յութերորդ .  
(ինչպէս վերն ալ ըսինք) : Իսկ քոյլ ձայնին Էջեյին մէջ՝ ասացին կեսդաւը  
դրված է, Երկրորդէն յերրորդ, եւ Երկրորդ կեսդաւը (դարձեալ միւսին  
պէս) եօթերորդէն յութերորդ :

### ՕՐԻՆԱԿ

Ա.	ասիճան	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.	Է.	Ը.	կամ Ա.
----	--------	----	----	----	----	----	----	----	--------

դամ կեսդամ դամ դամ դամ դամ դամ կեսդամ

**23.** Երբոր Եղանակի մը դրան բով կիսվեր կիսվար չզսնուի, այն  
ասեն Եղանակը կամ *so առոյգ*՝ եւ կամ շա քոյլ դաւին մէջ է :

Իսկ եթէ մէկ կիսվեր դրուած է (*ֆա #*) այն ասեն՝ կամ *սոյ առոյգ*  
է դաւը եւ կամ *մի քոյլ* :

Նոյնպէս եկու կիսվեր Եղած ասեն (*ֆա #, սո #*), կամ *րե առոյգ* է  
եւ կամ *սի քոյլ* :

Երեք կիսվերով (*ֆա #, սո #, սոյ #*), շա առոյգ՝ կամ *ֆա # քոյլ* :

Չորս կիսվերով (*ֆա #, սո #, սոյ #, րե #*), *մի առոյգ*՝ կամ  
*սո # քոյլ* :

Հինգ կիսվերով (*ֆա #, սո #, սոյ #, րե #, շա #*), *սի առոյգ*  
կամ *սոյ # քոյլ* :

Վեց կիսվերով (*ֆա #, սո #, սոյ #, րե #, շա #, մի #*),  
*ֆա # առոյգ*՝ կամ *րե # քոյլ* :

Եօթը կիսվերով (*ֆա #, սո #, սոյ #, րե #, շա #, մի #, սի #*) *սո # ա-*

առոյգ՝ կամ շա # քոյլ : — Իսկ այս վերջի դասերը շատ չեն գործածվիր :

### ՕՐԻՆԱԿ

So Առոյգ      Սօլ առ.      Բե առ.      Լա առ.

Լա Թոյլ      Մի ք.      Սի ք.      Ֆա # ք.

Մի առ.      Սի առ.      Ֆա # առ.      so # առ.

So # ք.      Սօլ # ք.      Բե # ք.      Լա # ք.

Չ4. Նոյնպես՝ երբոր եղանակի մը Բով մէկ կհախար դրված է (սի Բ), այն ասէն՝ կամ քա առոյգ է դաւր եւ կամ րե քոյլ :

Երկու կհախարով (սի Բ, մի Բ), սի Բ առոյգ՝ կամ սօլ քոյլ :

Երեք կհախարով (սի Բ, մի Բ, շա Բ), մի Բ առոյգ՝ կամ so քոյլ :

Չորս կհախարով (սի Ծ, մի Բ, շա Ծ, րե Բ), շա Բ առոյգ՝ կամ քա քոյլ :

Հինգ կհախարով (սի Բ, մի Բ, շա Բ, րե Բ, սօլ Բ), րե Բ առոյգ՝ է դաւր եւ կամ սի Բ քոյլ :



Վեց կիսախումբ (սի Ե, մի Ե, լա Ե, ռե Ե, սոլ Ե, սո Ե), սոլ Ե  
 առոյգ՝ կամ սի Ե քոլլ:

Եւ եօրը կիսախումբ (սի Ե, մի Ե, լա Ե, ռե Ե, սոլ Ե, սո Ե, ֆա Ե),  
 սո Ե առոյգ է դա՛նը՝ կամ լա Ե քոլլ: Այս վերջի դասերն ալ շատ  
 չեն գործածվիր:

### ՕՐԻՆԱԿ

So Առոյգ      Յա առ.      Սի Ե առ.      Մի Ե առ.

Լա Թոլլ      Բե ք.      Սոլ ք.      Տո ք.

Լա Ե առ.      Բե Ե առ.      Սոլ Ե առ.      Տո Ե առ.

Յա ք.      Սի Ե ք.      Մի Ե ք.      Լա Ե ք.

**25.** Յաի դրան ձայնանիւթները սովորիլ ուզողը՝ պարտի նախ՝ սոլի  
 դրան ձայնանիւթներ լաւ հանաչել. ապա՝ զիննալ, որ սոլի դրան ձայնա-  
 նիւթներն առնելով, եթէ երկու ձայնանիւթ վեր կլլայ, ֆա դրան ձայնանիւթը  
 պիտի հանաչէ: Զոր օրինակ. սոլ դրան երորդ զծին վրայ եղած ձայնա-

ըրբին անունն է սի. Եւ եթէ նոյն սիկն երկու ձայնանիւ վեր կլլանք, ըստ պիտի գտնանք, որ *Քաի* դրան երբորդ գծին վրայի ձայնանիւն անունն է:

### ՕՐԻՆԱԿ

սօլ լա սի սօ ըէ մի ճա սօլ լա սի սօ ըէ մի ճա սօլ լա սի սօ  
 սօլ լա սի սօ ըէ մի ճա սօլ լա սի սօ ըէ մի ճա սօլ լա սի սօ ըէ մի

**26.** Աղէկ դիտելու է որ *Քաի*ն դուրս հնգայնի չորրորդ գծին վրայ դրված է, որ նոյն գծին վրայի ձայնանիւն անունն ալ *Քա* է:

Վասն երաժշտութեան.

ԱՐՏԱՇԷՍ ՊԸՅԸԳՂԵԱՆ.

Այս համառօտ դասէն յետոյ՝ դնենք պարերդ մի դիւրագոյն, որով մանկունք կարենան վարժիլ թէ ազգային երգի եւ թէ պարի՝ մանաւանդ պարի, որ անմեղ զուարճութիւն միանգամայն ամենահարկաւոր կրթութիւն մի է իրենց մասաւ կազմը զօրացընելու համար:



ՀԱՅԿԵԱՆ ՉԵՓԻՒՌ  
ZÉPHIR D'ARMÉNIE

Բանի  
Ճ. ԱՐԱՄՅԱՆ.

Եղանակ  
Պ. ԱՐՏԱՇԻՍԻ.



Paroles  
D'ARAM.

Musique  
D'ARDACHESSÉ.

Չուարք. Allegretto.

ԴԱՇՆԱԿ  
PIANO.



ԵՐԳ. CHANT. Եղևի հար. Même mouvement.



Կհումժ mf. Հայ-կազ-նուր- ղի



eur qունդ ի պար Մա-սեաց հե - ռի հուպ ի քեզ

This system contains a vocal line in the upper staff and a piano accompaniment in the lower staff. The key signature has one sharp (F#) and the time signature is common time (C). The vocal line consists of a series of eighth and quarter notes. The piano accompaniment features chords in the right hand and a simple bass line in the left hand.

Չե-փիւռ դի-մօղ ի մեր յաւ-յար Գաղ-րէ պա-հիկ մք սեռ մեզ

This system continues the musical piece with a vocal line and piano accompaniment. The notation is consistent with the first system, maintaining the same key signature and time signature. The piano accompaniment continues with chords and a steady bass line.

Ռ F Իսկ սը-լա-նալ քէ Ին է ժամ Յափ ա-րա-ֆսի Ե դե-մեան

This system concludes the musical piece. It includes a vocal line and piano accompaniment. The key signature remains one sharp (F#) and the time signature is common time (C). The piano accompaniment features chords and a bass line, with a dynamic marking of *ff* (fortissimo) in the lower left corner.

*U P* Թող մեր ձայներ եւ այս ան գամ Քեւ սր-սր-կին ի հե-ռան

*U P*

*Վերջնիւրգ. Refrain.*

*U P* Զեփխտ ա-նոյ՛ց հրե-սակսի բուն Որ սր-լա-նաս մեր վր-բան

*U P*

*D.C.*  
Ո՛ր Բա եւ ող-ջոյն մեր սի-րա-սուն Տար ու սր-փռէ Հայ-աս-տան

*D.C.*  
*ff*  
*ma. cres.*  
*uuu. ff*



## ՀԱՅԿԵԱՆ ՁԵՓԻՒՌ

ՊԱՐԵՐԳ

Հայկազնորդի Եւր զունդ ի պար,  
Մասեաց հեռի հուպ ի հեզ.  
Ձեփիւն դիմօղ ի մեր յաշար,  
Գարէ պահիկ մը սեւ մեզ:

Իսկ սրլանալ թէ քո է ժամ՝  
Յափ Արափի Եղեմեան.  
Թող մեր ձայներ՝ եւ այս անգամ,  
Քեւ սրսրկիին ի հեռան:

Ձեփիւն անոյշ, հրեւսակ սիրուն,  
Որ սրլանաս մեր վրան.

Ս'ն եւ ողջոյն մեր սիրասուն,  
Տաւ ու սրփոք Հայաստան:

Երբ ժամանեա Եփրատի մօտ,  
Ձայնիկդ ուժգին մի՛ սրկար՝  
Ու մի վերէն աչքէ կարօտ  
Արծիւի պէս սրլանար:

Յուշիկ ընթա. Բաղափ եւ գեղ,  
Բերդ, աւերակ՝ ամենուն  
Ըսէ, թէպէտ հեռաւոր տեղ՝  
Սրսիս մօտ եւն Հայերուն:

Ձեփիւն անոյշ, հրեւսակ սիրուն,  
Որ սրլանաս մեր վրան. . . .


Ձեփիւն սրբուն, իմ լրբասար,  
Դո՛ւ միայն որ դարէ դար՝  
Սահման ի վեր ազնւանցար,  
Հրնչէ բոլոր Հայկեանսար:

Ազնւ լեռնէ Մասեաց վեհին,  
Արափի մինչ ափերուն,  
Կրկնէ ի լուր Հայկեան սեռին  
Թէ կամք ի պար իր սիրուն:

Ձեփիւն անոյշ, հրեւսակ սիրուն,  
Որ սրլանաս մեր վրան. . . .

Handwritten text in a non-Latin script, possibly Indic, located at the top of the page.

Handwritten text in a non-Latin script, possibly Indic, located in the upper right quadrant of the page.



Handwritten text in a non-Latin script, possibly Indic, located in the lower left quadrant of the page.

## Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ

Գասարանիս մէջ 236 հաս մեծ եւ փոքր պատկերներ կան եւ որոց ամէնուն ալ փայտեայ փորագրութիւնները Հեղինակին սեփականութիւնն են : Այս պատկերաց կապարեայ գաղափարներէն զնել ուզողները կրնան գրել ի փարիզ, առ Պ. Հանիկ Արամեան, եւ իւրամանչիւր պատկերաց զներն իմանալ, որ պատրաստ է արժանաւոր եւ վայելուչ զներով ծախել՝ մանաւանդ ամուսնոյ՝ որ Հայկական Տպագրութիւնը ծաղկեցրնելու եւ կատարելագործելու փոյր ու ջանք ունին :





## Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ


Արգար քազաւոր եւ մկրտութիւն նորա ի Թաղէտէ Առաքելոյ.	85
Արել եւ Կայէն. — Կեանք Նահապետաց.....	59
Արահամ, Իսահակ եւ Յակոբ.....	65
Աղամ եւ Եւայ. — Արսախուն ճոցա ի Գրախէստ.....	38
Աղասի քաջ, վերջին հայրենասէր.....	95
Աղեղնաւոր (կենդանակերպ).....	191
Աղօթք Տէրունական.....	46
Այլ-բէ-գի Մեծոպեան.....	9
Այծեղջիր (կենդանակերպ).....	192
Անի, մայրաքաղաք Բագրատունեանց.....	85
Անկիւա (պատմական եւ աշխարհագրական).....	141
Անց Սրահի. — Շահաբա, գերութիւն եւ կոսորում Հայոց.	91
Անց Կարմիր ծովու. — Մովսէս եւ Փարաւոն.....	65
Աշխարհացոյց Հայաստանի.....	95
Աճարակաւորութիւն եւ Հայկ.....	61
Ապրիլ (երկրագործութիւն).....	184
Առակ որդւոյն անառակի.....	75
Առիւծ (կենդանակերպ).....	187
Առիւծ (կենդանաբանութիւն).....	99
Մրում հայրենասէր Իշխան եւ մեծագործութիւնք նորա.....	80
Մրդեան վիճակ Հայաստանին.....	94
Մշտանք քեցանեաց ի Հայս եւ աւերում Անի քաղաքի.....	86
Մշակունիք, (Վաղարշակ եւ այլք).....	82
Աւետարան քս Դուկասու (գրաբառ եւ աշխարհաբառ).....	51
Աւետարան քս Մասքէոսի (գրաբառ եւ աշխարհաբառ).....	49
Աւետարան քս Մարկոսի (գրաբառ եւ աշխարհաբառ).....	50
Աւետարան քս Յովաննու (գրաբառ եւ աշխարհաբառ).....	52
Աւետաց երկիր. — Արահամ եւ Մեղիսեղէկ.....	62
Աւերակք Անույ եւ վերջ Բագրատունեանց.....	87
Աւստիա (պատմական եւ աշխարհ.).....	144
Բագրատունիք եւ գործք նոցա.....	85
Բագրատունիք եւ գործք նոցա (քուստրական).....	200
Բաժանում (քուստրական).....	202
Բառ եռապանկ.....	17
Բառ երկապանկ.....	34
Բառ հնգապանկ.....	38
Բառ միապանկ.....	15
Բառ բառապանկ.....	57
Բարձում (քուստրական).....	199
Բէլ եւ մահ նորա ի Նախահօրէ մերմէ Հայկայ.....	79
Բորեան (կենդանաբանութիւն).....	100
Բրուսիա (պատմական եւ աշխարհ.).....	143
Գաղթականութիւն Հայոց.....	89
Գայլ (կենդանաբանութիւն).....	101
Գաղիկ Թագաւոր եւ Յոյնք.....	87
Գերութիւն Իսրայէլացոց ի Բաբելոն. վերադարձ նոցա յԵրուսաղէմ	71
Գաւառակ (կենդանաբանութիւն).....	102

Դասիք յարդէ գԳողիսք . — Ամսւսնանայ եւ քազարէ . . . . .	69
Դասիք քազարուն Եւսան Հայոց եւ գործք նորա . . . . .	92
Դեկտեմբեր (Երկրագործութիւն) . . . . .	192
Դրասիս ի Հայաստան . . . . .	58
Եզնիկ (Կենդանաբանութիւն) . . . . .	103
Երաճեսնոքիւն համառօս (Ինկերորդ մաս Դասարանիս) . . . . .	207
Երեսն եւ բնակիչք նորա . . . . .	167
Երկաստա քաւք . . . . .	17
Երկու ձայնաւորաւ միաձայնք . . . . .	12
Երկուոր (Կենդանակերպ) . . . . .	185
Երկրագործութիւն (Եօրերորդ մաս Դասարանիս) . . . . .	179
Զէպր կամ Վագրնի (Կենդանաբանութիւն) . . . . .	104
Զէլքուն, Հանին եւ բնակիչք նոցա . . . . .	173
Զուիցր (պաստական եւ աշխարհ) . . . . .	156
Էյսիածին ի Վաղարշապատ եւ կարողիկոս Հայոց . . . . .	166
Էսկիւռ (Կենդանաբանութիւն) . . . . .	103
Էրզրում կամ Կարին եւ բնակիչք նորա . . . . .	171
Ընձուղօս (Կենդանաբանութիւն) . . . . .	106
Ընկերութիւն Երկոստան աւակերաց եւ հրաւք Քրիստոսի . . . . .	73
Թիկնուռ (Կենդանաբանութիւն) . . . . .	107
Թիժիկ եւ բնակիչք նորա . . . . .	170
Թորգոմ հայր Հայկայ եւ Թորգոմեանք . . . . .	61 78
Թուաբանութիւն համառօս (ուրերորդ մաս Դասարանիս) . . . . .	197
Թուանեանք եւ համառք (հայերէն եւ ժուաներէն) . . . . .	45
Ժիսար (Կենդանաբանութիւն) . . . . .	108
Իզմիր եւ բնակիչք նորա . . . . .	176
Իզնիսիս կամ Կիկոմիդա եւ բնակիչք նորա . . . . .	177
Ինձ (Կենդանաբանութիւն) . . . . .	109
Իսահակ եւ Յակոբ . . . . .	65
Լարան, Լիա եւ Ռաֆէլ . . . . .	65
Լամա (Կենդանաբանութիւն) . . . . .	110
Լարորդ (Կենդանաբանութիւն) . . . . .	111
Լեզգեշին (Կենդանակերպ) . . . . .	186
Լեղիք (քուաբանական) . . . . .	206
Լոյ (Կենդանակերպ) . . . . .	185
Մածկոզնի (Կենդանաբանութիւն) . . . . .	112
Մերակոյս կամ Ժողով . — Քուտարկութիւն . . . . .	160
Մուռնիկ եւ մկրտութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . . . . .	72
Կարին (Կենդանակերպ) . . . . .	190
Կարին կամ Էրզրում եւ բնակիչք նորա . . . . .	171
Կարինէ Հայկազն դիւցազնուհի եւ Հայկազնուհիք . . . . .	90
Կարս եւ բնակիչք նորա . . . . .	172
Կէտք եւ ճեանք . . . . .	42
Կիլիկիա եւ Ռուբինեանք տէրութիւն . . . . .	88
Կիրակոս Բանանայ եւ մասնութիւն նորա . . . . .	86
Կեիռ (Կենդանակերպ) . . . . .	189
Կոյս (Կենդանակերպ) . . . . .	188
Կուրք (Կենդանաբանութիւն) . — Փեղոյր շինելու մտք . . . . .	113
Կոստանդնուպոլիս եւ բնակիչք նորա . — Հայք եւ Հայուհիք . . . . .	165

Կրօնի նախնի Հայոց և Քրիստոնէութիւն. — Արսաւիր վերջին.	85
Հագար աղայից, Իսահակ, Ռեբեկայ և Յակոբ.	65
Համբարձում Քրիստոսի և գալուստ Հոգւոյն սրբոյ.	77
Հայրենոյ քաղաքներ. — Բնակիչի նոցա.	161
Հայաստան (պատմական և աշխարհ.)	159
Հայկազանի բարձր (Վահէ և այլք).	81
Հայկեան գիտիւն (պարեզ).	221
Հայկ սպանանէ գիւլ.	79
Հանգանակ հաւատոյ (հաւատաւք).	47
Հարկաւոր գիտելիք ի վերայ ստախց.	39, 40, 41
Հեզեթի (արօք-անկանիմք).	45
Հոկտեմբեր (երկրագործութիւն).	190
Հուլիան (կենդանաբանութիւն).	114
Հօլանտա (պատմական և աշխարհ.)	151
Չայկաւոր ստախ.	42
Չորսիս (կենդանաբանութիւն).	115
Չուկն (կենդանակերպ).	182
Ղազարոս, մահ և յարութիւն նորա.	74
Ղեկնիկ (կենդանաբանութիւն).	116
Ճեռիկ (կենդանաբանութիւն).	117
Ման Մայսէսի. — Յետոյ զօրապետ.	67
Մայիս (երկրագործութիւն).	183
Մասնութիւն, մահ, քաղում և յարութիւն Յիսուսի Քրիստոսի.	76
Մարտ (երկրագործութիւն).	183
Միացեալ Նահանգ (պատմական և աշխարհ.)	137
Մովսէս Սինայ լեռան վրայ և անապատին մէջ.	66
Մուշկ (կենդանաբանութիւն).	118
Յարութիւն Ղազարոս. — Մարիամ և Մարթա.	74
Յանկում (քուարանական).	198
Յովագ (կենդանաբանութիւն).	119
Յովսէփ յեգիպտոս, և Փարաօն.	64
Յուլիս (երկրագործութիւն).	187
Յունաստան (պատմական և աշխարհ.)	159
Յունիս (երկրագործութիւն).	186
Յունկար (երկրագործութիւն).	181
Նարոյի (պատմական և աշխարհ.)	154
Նահապետի յԱզամէ մինչ ի Նոյ.	59
Նապաստակ (կենդանաբանութիւն).	120
Նիկոմիդիա կամ Իզնիմիս և բնակիչի նորա.	177
Նոյեմբեր (երկրագործութիւն).	191
Շահաբադ և անց Արախի. — Գերութիւն և կոտորում Հայոց	91
Շէկազուէս (կենդանաբանութիւն).	121
Շերաս կամ Իսորդ (կենդանաբանութիւն).	132
Շուէս (պատմական և աշխարհ.)	133
Ոգնի (կենդանաբանութիւն).	122
Չիլի (կենդանաբանութիւն).	123
Պայէզիս և բնակիչի նորա — Արմաի-Բերդ և Թէղորոս Ռեսուրսի	169
Պատմութիւն ազգաց (հինգերորդ մաս Դասարանիս).	158
Պատմութիւն կենդանեաց, (չորրորդ մաս Դասարանիս).	97

Պատմութիւն արագան եւ ազգային (Երրորդ մաս Դասարանիս)	53
Պատմութիւն հայաբնակ Բաղամաց (վեցերորդ մաս Դասարանիս)	161
Պարեզ (Հայկեան զեփիսոն).....	221
Պաւիտրա (պատմական եւ աշխարհ.).....	158
Պէլնիքա (պատմական եւ աշխարհ.).....	149
Պիւքարեան արիւսակ.....	291
Պուզան (կենդանաբանութիւն).....	124
Պուզիլիա (պատմական եւ աշխարհ.).....	153
Ջրադուէս (կենդանաբանութիւն).....	125
Ջրնէդէդ, Նոյ եւ Այրաւա լեռ.....	60
Ջրնոս (կենդանակերպ).....	181
Ռեզեդիւր (կենդանաբանութիւն).....	126
Ռուքինեան (Ղեռնիկ եւ այլ).....	88
Ռուսիա (պատմական եւ աշխարհ.).....	142
Սամոյր (կենդանաբանութիւն).....	127
Սարսենիա (պատմական եւ աշխարհ.).....	146
Սաւուդ քաղաւոր եւ մահ նորա.....	68
Սաֆուսիա (պատմական եւ աշխարհ.).....	150
Սեպտեմբեր (երկրագործութիւն).....	189
Սիս եւ բնակիչ նորա.....	175
Սոլոմոն Թագաւոր. — Դասասան նորա. — Շինութիւն տաճարի	70
Սպանիա (պատմական եւ աշխարհ.).....	147
Ստեղծում աշխարհի.....	57
Վագր (կենդանաբանութիւն).....	128
Վագրձի կամ Ջէպր (կենդանաբանութիւն).....	104
Վանայ ծով կամ Վան եւ բնակիչ նորա.....	168
Տանկաստան (պատմական եւ աշխարհ.).....	145
Տանրմար (պատմական եւ աշխարհ.).....	152
Տասնաբանեայ պատմութեան եւ Սինա լեռ.....	66
Տարսնի եւ բնակիչ նորա.....	174
Տիան (կենդանաբանութիւն).....	129
Տիգրան Արշակունի, Թագաւոր-Թագաւորաց. — Հոռմայեցի.	82
Դաթիլ (կենդանաբանութիւն).....	150
Յիցոզնի (կենդանաբանութիւն).....	151
Յուլ (կենդանակերպ).....	184
Խորդ կամ Շերաս (կենդանաբանութիւն).....	152
Փարաօն, Մովսէս, Ահաւոն եւ Իւրայելացիք.....	63
Փերկար (երկրագործութիւն).....	182
Փոկ (կենդանաբանութիւն).....	155
Փորոնկալ (պատմական եւ աշխարհ.).....	148
Քորեկի ժայռն ու Մովսէսի հրաւեր.....	66
Քօլ (կենդանաբանութիւն).....	154
Օգոստոս (երկրագործութիւն).....	188
Օլիպիոս (կենդանաբանութիւն).....	155
Ֆիւր (կենդանաբանութիւն).....	156
Յրակուլ Իսիան (մասնիչ Հայաստանի). — Վերջ Իսիանութեան:	94





у/т/у/

у/т/у/

у/т/у/

у/т/у/



Justy 17

Wm. H. B.

Wm. H. B.

# ՆՕՐԱՏԻՊ ՄԱՅԵՊԵՏ

Ի ՄՄԻՆ ՏՊԱՐԱՆԻ

Գին յազմեալ էւ անկազմ օր, լսեաց.

	Գին	Ս.
<b>Փո. Բաւարացի Արքեպիսկոպոսի Հայերէն ի Տառնիկ եւ ի Թաւադեան լեզու . . . . .</b>	10	«
<b>Բաւարացի Հայ. ի Տառնիկ եւ ի Թաւադ. լեզու . . . . .</b>	7	50
<b>Պատմութ. Նախնեաց Վասաւ արքայութեան Թարգմանութիւն Տ. Յովաննու Եպիսկոպոսի.</b>	«	«
<b>Սարգիս փոքրադիր, պատկերազարդ, թղթակազմ</b>	2	50
— Հասարակ կազմ . . . . .	3	«
— Նոյն. ոսկեգոծ . . . . .	4	«
— Միջակ կաշեպատ . . . . .	5	«
— Նոյն. ոսկեգոծ . . . . .	8	«
— Ազնիւ կազմ . . . . .	10	«
— Գեղարդեալ . . . . .	12	«
<b>Պիլիքս եւ Պատիկէ (վիպաբանութիւն) թղթ.</b>	3	«
— Նոյն. հասարակ կազմ . . . . .	4	«
— Ազնիւ թղթ էւ ազնիւ կազմ . . . . .	8	«
<b>Նարեկ մեծադիր կազմեալ . . . . .</b>	3	«
— Փոքրադիր, պատկերազարդ. կազմ ոսկեգոծ . . . . .	6	«
— Կաշեպատ ազնիւ կազմ ոսկեգոծ . . . . .	10	«
<b>Դասարան Հայկազն Մանկանց. բազմապատկեր, ինք մասի բաժանեալ: Ամբողջն . . . . .</b>	6	«
— Նոյն. Սինեան թղթով փառապալմ ոսկեգոծ . . . . .	20	«
— Նոյն. Սաւաթին եւ Եկրարդ մաս: Առանձին	4	«

## ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

<b>Թարգմանութիւն Տ. Սիմեոնի Միխայելեան . . . . .</b>	«	«
<b>Փոքրադիր Թաւարան Թաւադեան ի Հայ եւ ի Տառնիկ, (արդիլեզուեան) . . . . .</b>	7	«
— Նոյն. Տաւադեան ի Հայ եւ ի Թաւադ. լեզու . . . . .	«	«